

# ՀԱՄԱՍՏԵՂԻՆ ՌԻՂՂՈՒԱԾ ՆՈՐԱՅԱՅՏ ՆԱՄԱԿՆԵՐ

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

varny1@yahoo.com

Տարիներ առաջ, ամերիկահայ գրագետ Համաստեղի (Համբարձում Կելենեան, 1895-1966) արխիվը երկու հանգրուաններով կ'առաքուէր Երեւանի Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան Եւ Արուեստի Թանգարանը (ԳԱԹ): Արխիվը դասաւորած էր անոր մտերիմ բարեկամն ու գրչակիցը՝ Արամ Հայկազը (1900-1986), որ 3 Մայիս 1971ին Համաստեղի դուստրերուն կը հաղորդէր. «Բոլոր նամակները աչքէ անցուցի՝ տեսնելու համար, թէ որեւէ անյարմար նիւթ կա՞յ մէջը. նիւթ մը, որ պատիւ չի բերեր գրողին, ստացողին, կուսակցութեան կամ մեր գաղութին: Գտայ 8-10 նամակ՝ ստորագրուած Վարդուիի Քալանթար Նալբանդեանէ Ուաշինկթըն Տի Սի եւ Տրդատէ՝ գրական անունով “Էջմիածնեցի”։ Երկուքին նամակներն ալ լեցուն են բամբասանքով եւ կուսակցական հանրային դէմքերու հասցէին նեւրուած մուրով:

Ինձամբով զայտեցի զանոնք ու կը պահեմ քովս՝ անոնց հետ ձեր ուզածին պէս վարուելու կամ զանոնք եր ձեզի դրկելու համար»:

10 Յունիս 1971ին Ա. Հայկազ ծանուցած է իր դասաւորումին աւարտը գրագետին աւագ դստեր՝ Լորիկ Համաստեղին. «Հիմա զանք հայրիկիդ թողթերուն: Ամէն ազար ժամ մը երկուք ժամանակ ունենալու՝ աշխատեցայ զանոնք քիչ մը դասաւորել, զայտել եւ ծրարներու վերածել ինչպէս ըրած էիք դուք: Պարունակութեան ցանկը, տարբեր էջի վրայ կը ներփակեմ: Գրած եմ թէ կարգ մը նամակներ վար դրի. յարմար չէր որ Հայրենիք երթային»<sup>2</sup>:

Այս գրութիւնը մաս կը կազմէ գրեթէ ամբողջութեամբ նամակներէ բաղկացած Համաստեղի վերաբերող նորայայտ թղթածրարի մը մէջ (այսուհետեւ՝ «Համաստեղ, թղթածրար»)<sup>3</sup>: Ըստ երեւոյթին, Համաստեղի ու Ա. Հայկազի մտերիմ բարեկամ, նիւտորքաբնակ Յակոբ Խաշմանեանի դուստրը, այժմ հանգուցեալ Արփինէ Խաշմանեանը զայն յանձնած է Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի Ազգ. Առաջնորդարանին (Նիւ Եորք), ուր կը գտնուի ներկայիս:

Սոյն թղթածրարին քննութենէն կը պարզուի,, որ Համաստեղի արխիւէն զտուած նիւթերը վերոյիշեալ «8-10 նամակներ»ով սահմանափակուած չէին: Արդարեւ, ան նաեւ կը պարունակէ ուրիշ «վար դրուած» նամակներ, որոնց Հայաստան առաքումը յարմար չէ նկատուած (ներառեալ՝ Համաստեղի կողմէ գրուած երկու նամակներ, որոնք կը մնան հրատարակելի): Ի դէպ, Վարդուիի Քալանթար Նալբանդեանի նամակները թղթածրարէն բացակայ են, ըստ երեւոյթին՝ փճացած կամ

կորսուած ըլլալով: Այդ թողօնին բոլոր նիւթերուն ընթերցումէն ետք, Ա. Հայկազի դասաւորումի ժամանակէն աւելի քան չորս տասնամեակի հեռաւորութիւնը բաւարար նկատեցինք, որպէսզի հրատարակէինք համեմատաբար «անվնաս» տասը նամակներ, որոնք 1929-1965ին Համաստեղին ուղղուած էին Ռուբէն Դարբինեանի, Կոստան Զարեանի, Տրդատ Գազանճեանի, Ռուբէն Տէր Մինասեանի, Սիմոն Վրացեանի, Գրիգոր Շահինեանի եւ Բարգէն Փափագեանի կողմէ: Ընթերցողը պիտի նկատէ, որ ո՛չ բոլոր նամակները անձնական «բամբասանք» կամ «մուր» կը պարունակեն, իսկ որոշ պարագաներու, յստակ կը դառնայ, որ անոնց անջատումը այլ պատճառներու կը հպատակէր: Բնականաբար, այս նիւթերուն լոյս ընծայումը հեռու է ենթակայական բնութագրումներ վաւերացնելէ, իսկ բնագրերուն նոյնութեամբ հրատարակութիւնը – բացի քանի մը ուղղագրական բացայայտ վրիպակներու ուղղումէն – ընդամէնը կը միտի գրաքննական կեցուածքներէ զերծ մնալու: Անհրաժեշտ ծանօթագրութիւններ կատարած ենք՝ մեր կարելիութեան սահմաններուն մէջ:

#### **Ա. Ռուբէն Դարբինեան<sup>4</sup>**

Բոստըն, 24 յունուար 1929 թ.

Սիրելի Համաստեղ,

Նամակդ Մարտէյլէն<sup>5</sup>, ինչպէս եւ Պալաքեան եպ[իսկոպոսի]<sup>6</sup> տուած բանաստեղծութիւնները ստացայ շնորհակալութեամբ: Քանի մը հատը լոյս կը տեսնեն փետրուարի թիւին մէջ<sup>7</sup>, մնացեալները յաջորդաբար<sup>8</sup>:

Նիսէն անպատճառ կը սպասեմ քեզմէ նամակի մը: Յոյս ունիմ, որ Մաննիկի<sup>9</sup> հետ հաճելի ժամանց պիտի ունենաս: Գրէ՛ տպաւորութիւններդ<sup>10</sup>:

Եգիպտոս լաւ ժամանակ կ'երթաս<sup>11</sup>: Հարկաւ մերոնց մօտ կ'ըլլաս: Վստահ եմ, որ շատ պիտի ուրախանան, եւ դուն ալ գոհ պիտի մնաս:

Տպաւորութիւնդ Նիկօլ Աղբալեանի<sup>12</sup> մասին չէիր գրած<sup>13</sup>. գրէ՛, շատ հետաքրքրական է:

Այստեղի թաղական աղաներու մասին յաճախ կը հարցնես<sup>14</sup>: Վերջերս բաւական անհամ, եթէ կ'ուզես նոյնիսկ զգուելի մթնոլորտ մը ստեղծեր են: Երես են առեր նոյնիսկ անոնք, որոնք երէկ՝ ուրիշներով շրջապատուած՝ խեղճ էին ու աւելի համեստ: Ոեւէ ատենէ աւելի, սիրելիս, ինքզինքս մինակ կը զգամ: Երբ դուն հոս էիր եւ ամէն օր կու գայիր մօտս, հարազատ եւ անդաւաճան հոգիի մը ներկայութեամբ մոռցնել կու տայիր մինակութիւնս: Այժմ շուրջս չկայ մէկը, որուն հետ կարենայի սրտբաց խօսիլ: Իսկ մեր մէջ ամենալաւ տղաներն ալ Նիւ Եորք են: Երբեմն վայրկեաններ կ'ունենամ, երբ կ'ուզեմ ամէն գնով [ձգել] այս միջավայրն ու գործը եւ երթալ թէկուզ հասարակ գործաւորութիւն ընել: Գոնէ բարոյապէս այսքան ճնշուած չեմ լինի: Ամէն պարագայի տակ երբ ներսս կը նայիմ, կը տեսնեմ, որ արդէն

լրջօրէն սկսած եմ խորհիլ կուսակցական պաշտօնս ձգելու մասին: Օր մը չէ օր մը պիտի ընեմ, անելի լա՛ւ չէ շուտ ընեմ, եթէ չեմ ուզեր բարոյական անելի մեծ հարուածներով հեռանալ:

Յոյս ունէի, որ Ընդհանուր ժողովի պիտի կարենամ երթալ<sup>15</sup>: Ռուբէնը<sup>16</sup>, Վրացեանն<sup>17</sup> ու Ջամալեանն<sup>18</sup> ալ միասին նամակ էին գրած եւ ուղղակի պահանջ դրած, որ երթամ: Ես ալ ուզեցի երթալ: Կ[եդրոնական] Կոմիտէի մէջ երբ ներկայացուցիչ ղրկելու հարցն եկաւ, իմ թեկնածութիւնս դրուեցաւ ոմանց կողմէ եւ ընդունուեցաւ: Ես ալ համաձայնութիւն յայտնեցի երթալու: Բայց յետոյ տողթ[որ] Թ[աշճեան]ը<sup>19</sup> փուշ պատրուակով մը արեց գործը, ընտրութիւնը քաջքշեցին երկու ամսով եւ վերջն ալ, երբ օր մը հիւանդութեան պատճառով բացակայ էի, ընտրեր են տողթ[որ] Թաշճեանը: Այդ զգուելի խաղը տեսնելէն եւ մասնաւոր կերպով մաս մը բաներ լսելէ ետքը, նոյնիսկ որոշէին ալ զիս ղրկել, դարձեալ չպիտի երթայի: Այնպէս որ, սիրելիս, Երոպա երթալու հարցը ալ ջուրն ինկաւ: Ամէն բանի մէջ, նկատելի է որ, մարդիկ կ'աշխատին զիս յետ մղել: Ես ալ կը զգուիմ այդ խաղերէն եւ անելի եւս վերապահ կը դառնամ: Շատ գէշ դեր կը կատարէ մասնաւորապէս տողթ[որ] Բարսեղեանը<sup>20</sup>, որ տողթ[որ] Թ[աշճեան]-ի հետ քիթը<sup>21</sup> մը կազմած են եւ ուզածին առաջ կը քշեն միւսներն ալ իրենց յետեւէն քաշելով: Նամակով, սիրելիս, չի գրուիր ամէն բան, բայց հասկցիր որ ամենագէշ տարիներէն մէկն է այս: Չգիտեմ պիտի դիմանամ մինչեւ Պատգ[ամաւորական] ժողով, ուր կարծեմ թէ բացէն կոհի մը պիտի ունենամ արդէն ոչ թէ պաշտպանողական, այլ յարձակողական դիրքի մէջ, որովհետեւ բաւականին հիմեր կան ատոր համար<sup>22</sup>:

Ասատուրը<sup>23</sup> փետր[ուար] 9-ին կը մեկնի Փարիզ. թերեւս վերադարձիդ (եթէ շուտ դառնաս) տեսնուիս հետը: Սարաֆը<sup>24</sup> կու գայ երբեմն եւ քու մասին կը խօսինք ու այդպէս կարօտներս քեզմէ կ'առնենք:

Վերջերս Նիւ Եորք երթալու խնդիր մը կար. տղաքն ալ հոն շատ կ'ուզէին: Բայց այդ ալ ջուրը նետեցին մեր թաղական աղաները:

Դատս վերջացաւ իրաւախոհութեամբ մը - այսինքն՝ հերքում մը տպելով: Բանտարկութեան լուրը սխալ էր: Վճարեցինք միայն 1000 տոլ[ար] գրաւական մը, զոր յետոյ ետ ստացանք<sup>25</sup>:

Նոր բան մը չգրեցի՞ր տակաւին «Հայրենիք»ի համար: Անհամբեր կը սպասեմ, թէ եւ միեւնոյն ատեն կ'ուզեմ, որ ինքզինքդ երբեք չնեղես՝ անպատճառ բան մը ղրկելու համար: Եթէ հաւէս<sup>26</sup> ու ժամանակ ունեցար եւ մանաւանդ մուսադ եկաւ, գրէ եւ ղրկէ:

Մրցանակներու մասին եղած դժգոհութիւնը զիս չի զարմացներ<sup>27</sup>: Այս տարի, սակայն, ոեւէ տարիէ անելի մարդոց կարծիքն առած եմ: Ուրիշ հնար չկար: Այո՛, զուտ մրցանակ չէ մեր տուածը՝ այլ չափով մը նաեւ նպաստ, պատուաւոր նպաստ<sup>28</sup>:

Քիչ մը անելի յաճախ գրէ: Չես կրնար երեակայել, թէ որքան կ'որախացնեն նամակներդ, որպիսի անսահման հաճոյքով կը կարդամ գրածդ ամէն տողը:

Այս նամակս ես Կարոյի<sup>29</sup> միջոցով կը ղրկեմ: Կ'ենթադրեմ, թէ դեռ Նիս ես:

Կարօտալի բարեւերով եւ համբոյրներով,  
Քոյդ՝ Ռ. ԴԱՐԲԻՆԵԱՆ

Յ.Գ. Նատիան<sup>30</sup> եւս ջերմօրէն կը բարեւէ քեզ:

## **Բ. Կոստան Չարեան<sup>31</sup>**

11-10-36

Կորֆու

Սիրելի Համաստեղ,-

Նամակդ սիրով կարդացի եւ այս անգամ այլեւս ամէն տեսակ ծովութիւն մի կողմ դրած ուզում եմ շուտ պատասխանել: - Հարցը այնքան էլ ծովութեան մէջ չի. մարդ երբեմն այլն]քան բան ունի ասելիք, որ չի ասում. եւ երբ չի ասում թում է որ ասում է անելի:

Երբեմն ուղիղակի յուսահատում եմ. հայ իրականութիւնը այնքան ողբալի է, երբ մարդ դիտում է հեռից, ինչպէս անում եմ ես: Իսկ գրականութիւնը... Ամէն անգամ երբ նոր գործ ես սկսում, մտածում ես. այս էլ գրեմ եւ էլ սատանան տանի, լռեմ ընդմիջտ, ճահիճը թողնելով իր որդերին: Մինչ չլինեմ էլի. գրականութիւնն էլ հարբեցողութեան նման մի բան է:

Շուրջդ ոչ մի կենդանի միտք եւ ոչ մի իրական կեանք: Արտասահմանի հայրութիւնը մեռնում է եւ ձեւի համար կեանք է խաղում. շարժումներ է անում ցոյց տալու համար որ դեռ ապրում է, մինչ իրականի մէջ արդէն այս աշխարհից չէ, արդէն յանձնում է խաւարին: - Ճշմարտութիւնը այդ է:

Իսկ ի՞նչ է դառնում այնտեղ, բուն երկրում. նազ ողբալի չի: Այնտեղ էլ մեռնում են ուրիշ կերպերով, ստրուկների անհրապոյր մահերով<sup>32</sup>: - Ամէնքը աղաղակում են. ոմանք իրենց կուսակցութիւնների համար, ոմանք իրենց գիւղի համար, ոմանք իրենց հօր համար, ոմանք իրենց անձնական ոչնչութիւնը պաշտպանելու համար: Միակ որբը հայ[ու]թիւնն է, իր ոգին եւ իր գրականութիւնը: Հրապարակի վրայ մնացել են մի քանի լեւանտիներ, նոյնքան ուժեղ [Դ]աշնակցութեան մէջ ինչքան այլուր...

Ինչ որ գրում ես «Հայրենիքի»<sup>33</sup> մասին իրաւացի է: Լեցնել, սեղմել, շատ երեւալ... Իսկ ինչով է լեցում այդ կարեւոր չէ. շատ էջեր լինեն... Ծանր եւ անմարսելի, որպէս զի ամէն ամիս մի ոմն քաղքենի կարդայ եւ օրաթերթի էջերում յօդաձ շո՛ւ բթամիտ ընթերցողների գլխին...<sup>34</sup> Եւ ի՞նչ յօդաձ...

Այնպէս որ [կ]եցցէ՛ հաւերը եւ անկախութիւնը: Միջոց ունենայի խոզ պահել՝ բախտաւոր պիտի լինէի:

Եթէ մի օր գամ, փառաւոր մի փիլաւ կ[']ուտենք՝ ճուտով, պարտէզիդ ծառերի տակ...

Այստեղ դեռ մի երկու ամիս պիտի մնամ, ապա որոշել եմ մեկնել: Իտալիա երկու անգամ գնացի, մի երկու շաբաթով, այս անգամ հաւանական է որ անելի երկար մնամ:

Այդ մեր Դարբինեանին<sup>35</sup> ասիր որ հոնօրարներս<sup>36</sup> դրկի եւ ունեցած պարտքը *միասին*, որպէս զի գործերս կարողանամ կարգադրել: Պնդի՛ր: Զայրացի՛ր, աղաղակի՛ր: Բռունցքդ սեղանին զարկ: Մի խօսքով շարժի՛ր:

Շատ շնորհակալ եմ զրկած թերթերիդ համար: Եթէ մի բանի պէտք ունենաս գրիր:

Քարեւի Դարբինեանին, միշտ աղաղակելով եւ բողոքելով, որպէս զի միւս սենեակները արթնանան եւ փիսուփիւններ չանեն...

Մնամ սիրով

Կ. ԶԱՐԵԱՆ

#### Գ. Տրդատ Գագանճեան<sup>37</sup>

15 Դեկտ. 1946 Ֆրէզնօ

Սիրելի Համաստեղ!

Ստացած եմ, քո բոլոր նամակները, եթէ չեմ պատասխանած իր ժամանակին, պատճառը ոչ ծուլութիւնն է, եւ ոչ ալ անհոգութիւնը, այլ իմ մէկ գլխաւոր ծրագիրը կ'ուզէի գործադրել, եւ ըստ այնմ քեզ գրել: Հարցը հետեւեալն է, դու քո նամակներէն մէկուն մէջ կը գրէիր ինձ [sic], թէ սա ինչ Կալիֆօրնիա գալու հարց է, ամէն մարդ կը խօսի բայց դուն բանէ լուր չունիս: Ասկէ տարի ու կէս առաջ Դարբինեանը ինձ գրած էր, որ որոշուած է «Ամսագրի» 25ամեակը տօնել<sup>38</sup>, եւ այդ առթիւ իմ կարծիքն էր ուզած, միեւնոյն ժամանակ իմ թելադրութիւնները, որը եւ այս տարի կրկնեց: Ես առաջին հարցը որ դրած էի, եւ անկէ վերջը իմ բոլոր նամակներուն մէջ կրկնած եմ, այն է, թէ Դարբինեանին հետ անպայման պէտք է գայ եւ Համաստեղը, այդ միմիայն առեւտրական բաղ[ձ]անք չէ, այլ այստեղի բոլոր ընկերներու եւ մանաւանդ Ալէքի<sup>39</sup> եւ Քարեանի<sup>40</sup> պահանջն է: Ամէն անգամին ալ ինձ պատասխանատուեցաւ, որ Համաստեղը ինքը չի ուզեր կամ չի կրնար բացակայիլ Պոստոնէն: Ճանչնալով Օգանեանը<sup>41</sup> եւ իր շրջապատը, այդ պատէ-պատ պատասխանները ինձ շատ հասկանալի էին, այդ պարոնները կ[']ուզեն դրամ ունենալ, բայց երբէք ծախսել, նոյնպէս ի նկատի ունենալով, քո հիւանդութեան հասնող ինքնասրբութիւնը: Իմ վերջին նամակով գրեցի իրենց (որու պատասխանը դեռ չեմ ստացած) որ գործի յաջողութեան համար Համաստեղի Կալիֆօրնիայ [sic] գալը անպայման կենսական է, որ ան Կ[ետրոնական] Կոմիտէի կամ «Հայրենիք»ի վրայ ոչ մէկ բեռ պիտի լինի, որ Քարեան համաձայն է վճարելու, Համաստեղի 10 շաբաթուայ վար[ձ]ատրութիւնը, իրականին մէջ ինչ որ ալ է նոյնպէս անոր ճամբու ծախսը եւ մնացած բոլոր ծախսերը, մինչեւ 1500 տոլար, որ այս գումարը, որեւէ առընչութիւն

չունի եւ չպիտի անդրադառնայ այն գումարի վրայ որ Քարեանը պիտի տայ «Ամսագրին», այնպէս [որ] քո գալու պարագային Ալէքը քեզ պիտի նուիրէ 1500 տոլարի գումար մը, որ դուն կարողանաս տպել քո Սպիտակ ծիւղերը<sup>42</sup>:

Ահաւասիկ ամբողջ հարցի էութիւնը, այժմ ինձ համար պատ[ո]յայ հարց է դա[րձ]ել քո այս տեղ գալը, եւ այս բոլորէն վերջ եթէ Ձեր պարոնները չուզեն, ես ալ որոշած եմ չ[է]զոք մնալ «Ամսագր»ի տօնակատարութեան, որը հաւատացած եմ իրենց շատ եւ շատ շօշափելի վնաս պիտի տայ: Ես համեստ մարդ եմ, բայց եւ գիտակից['] ուժերուս, ես շատ եւ շատ ըրի, թէ կուսակցութեան, թէ «Հայրենիք»ի եւ թէ Հայ Կարմիր Խաչի<sup>43</sup> համար, իմ գալէս առաջ Կալիֆորնիան մեռած էր:

Ես եթէ քո անպայման գալու հարցը դրած եմ, ճիշտ է շատ եմ կարօտել քեզ եւ կ[']ուզեմ տեսնել, բայց գլխաւորը այդ չէ, դու ժամանակակից հայ գրականութեան կոթողներէն մէկն ես, ժողովուրդը, զանգուածը, մտաւորականութիւնը, պէտք է որ քեզ տեսնէ, լսէ, ճանչնայ, իսկ այդ բոլորով, դու մեծապէս օգնած պիտի լինես, այն «Ամսագր»ին, որու փառքերէն մէկն ես եղած, գրածներս իմ խոր համոզումն են, եւ դուն լաւ գիտես, որ ես կեղծել չեմ սիրում:

Երեւակայէ մէկ վայրկեան Դարբինեանը շրջապատուած քեզմով, Վ. Սարոյեանով<sup>44</sup>, Լեւոն Սիւրմալեանով [sic]<sup>45</sup>, ինչ ոգետորիչ եւ գեղեցիկ պատկեր, ծառը եւ իր հասցուցած պտուղները<sup>46</sup>:

Պէտք է գիտցած լինես, թէ քեզ որքան կը սիրեմ, որով կարող ես անվերապահօրէն իմ խորհուրդին հետեւիլ, տար նամակս եւ կարդայ [sic] Դարբինեանին, դուն պէտք է անպայման անոր հետ գաս, դա «Հայրենիք»ին նպաստելէ զատ, եւ շատ ու շատ պիտի նպաստէ քեզ:

Ինչ նամակի մը սեղմ շրջանակին մէջ չի կարելի գրել, կ[']անոնես 10 շաբթուայ անվճար ար[ձ]ակուրդ եւ կը գաս, դա այնքան ալ դժուար չէ, որեւէ բժշկական տեղեկագիր, թէ քո առողջութեան համար 10 շաբթուայ ար[ձ]ակուրդի պէտք ունիս:

Համաստեղ սիրելիս[,] լսէ իմ խորհուրդը եւ չպիտի զոջաս, Սրբուհին ալ վերջը շատ գոհ պիտի մնայ:

Գալով Գասպար Իփէկեանի<sup>47</sup> աղջիկայ<sup>48</sup> [sic] հարցին, հակառակ իր զգուելի հօրը, ուզեցի օգտակար լինել, բայց դժբախտաբար էֆիտելիտներով<sup>49</sup> ոչինչ կարելի է ընել: Եթէ կ[']ուզեն անմիջապէս գալ, գրէ իրենց, որ ամուսինը թող ձեռնադրուի *հայ եկեղեցւոյ սարկաւազ*, այն ժամանակ Ամերիկայի մեր եկեղեցիներէն որեւէ մէկը, կարող է դիմում կատարել եւ որպէս եկեղեցական պաշտօնեայ բերել տալ, եթէ Ձեր կողմի եկեղեցիներէն մէկը չուզէ ընել, այն ժամանակ ես Կալիֆորնիոյ եկեղեցիներէն մէկուն կողմէն դիմում ընել կուտամ:

Նոյն ձեռով հարաւային Ամերիկայէն եկան Սաք[օ] Յակոբեանն ու կինը<sup>50</sup>: Երբ գան Ամերիկայ [sic] իրենց գործ գտնելուն համար կը խ[ո]ստանամ ամէն ինչ ընել:

Վերջին անգամ լինելով քեզ կըսեմ[.] դուն պէտք է անպայման գաս Դարբինեանի հետ, այլ ես հընկ-մընկ չընես, եւ դուն ոչ մէկ բանով պարտական չես լինիր Կ[եդրոնական] Կոմիտէին, այլ ընդհակառակը անոնք քեզ:

[ՏՐԴԱՏ]

Իմ կողմէ կարօտով համբուրէ երեխաներուն, ըսէ իրենց, որ հեռաւոր հօրեղբայր մը ունին, որ իրենց շատ կը սիրէ, նոյնպէս ջերմ բարեւներս Սրբուհիի<sup>51</sup>, իսկ քեզ ջերմօրէն կը համբուրեմ այն վստահութեամբ որ շուտով քեզ պիտի տեսնեմ:

ՆՈՅՆ

Դ.

[Ֆրեզնօ, 1947]

Սիրելի Համաստեղ!

Ստացած եմ նամակներդ, նոյնպէս երեխաներին դրկած գեղեցիկ նուէրները, որոնց համար իմ կողմէ զիրենք համբուրէ, բայց ի՞նչ պէտք կայ այդ աւելորդ ծախսերուն, դու ինձ այստեղ տեսար, ես ընդհանրապէս փողկապ չեմ գործածեր, միայն եթէ Սան Ֆրանչիսքո կամ Լօս Անջելոս երթամ ու եւ է *պաշտօնական հանգամանքով*, այդ առթիւ միայն կը գործածեմ: Այս գրելով խնդրեմ չի հասկնաս թէ ուրիշ բան կ[']ուզեմ, փառք Ալլահին ամեն ինչ ունիմ բացի առողջութիւնէն, որը ամենաթանգն է:

Սիրելիս[.] քո վերջի նամակիդ մէջ կը շօշափես կուսակցութեան նոր քաղաքականութիւնը ներգաղթի վերաբերմամբ, եւ կը գտնես, որ այնքան ալ ուղիղ չէ: Ես այդ կարծիքիդ բոլորովին համաձայն չեմ, եթէ կ[']ուզես աւելին կ[']ըսեմ, որ ինչ որ մինչեւ հիմայ [sic] ըրաւ Դաշնակցութիւնը, իր օրկաններով ու իր բեմերով, քաջալեր[ել]ով եւ զօրավիգ կանգնելով ներգաղթին, ոչ այլ ինչ էր եթէ ոչ դավաճանութիւնն [sic] իր իտէալներուն:

Մենք գիտնալով հանդերձ թէ ինչ դժոխք է *Խորհրդային Հայաստանը*<sup>52</sup>, փոխանակ այդ դժոխքը իր ահաւորութեան մէջ հրապարակ դնելու, ընդհակառակը զայն ներկայացուցինք վարդազոյն, չեմ գիտեր ինչ որ *ազգային հեռաւոր* ու *մեծ* գաղափարէ տարուած: Իմ խոր համոզումն է, եթէ մինչեւ իսկ այդ ներգաղթը ընելով, պիտի կրնայինք զօրացնել Խորհրդային Հայաստանը, ես այդ պարագային ալ դէմ պիտի կանգնէի, քանի որ այնտեղ կը տիրապետէ պատմութեան վատթարագոյն բռնապետութիւնը, *հայ լինելէ առաջ մարդ եմ եւ ազգայութեան* երկրպագու:

Դաշնակցութեան ոգին ու էութիւնը իր մեծութեամբ հրապարակ եկաւ, եւ մեր ժողովուրդի մէջ բացառիկ դիրք գրաւեց, միմիայն նրա համար, որ

նա ամենուրեք [sic] ու ամեն պայմաններու տակ, անխնայ կոհի մղեց ամեն տեսակ բռնապետութիւններու դէմ: Իսկ վերջի մեր 7-8 տարուայ գործ[ու]նէութիւնը սեւ ու ահաւոր բիծ մ[ը]ն է Դաշնակցութեան լուսեղէն պատմութեան մէջ:

Լաւ է որ շուտ գլխի ինկան, թէ չէ մի քանի տարի ալ նման գործ[ու]նէութիւն եւ Դաշնակցութիւնը մեռած էր, իր հետ եւ գերեզման տանելով հայ դատը:

Բոլշէվիզմը իր ահաւոր կոտորածներով այնքան էլ վտանգաւոր չէ, որքան նրա այլատերող ու մահացու թոյնը, որը անբարոյացուցած է գրեթէ բոլոր աշխարհը:

Ե՛ւ եթէ ազատասէր ժողովուրդներ չկրնան շուտով վերջ տալ, Սթալինին<sup>53</sup> եւ իր ստեղծած սուտի, կեղծիքի, դաւի ու արեան ճապաղիքներուն, մնաս բարով քաղաքակրթութիւն ու նրա անհամար բարիքները, որոնք ձեռք բերելու համար հազարամեայ պայքար պէտք եղաւ, եւ մարդկութիւնը կը դառնայ անբան անասուններու հօտ մը, որու համար միջնադարեան խաւարը պայծառ ատեն պիտի թուի:

Գիտեմ, կարդալով այս տողերը պիտի խնդաս եւ քիչ մ[ը]ն ալ պիտի ցաւիս, որ Տրդատը անուղղայ է: Բայց լաւ հասկցիր ինձ, ինչ ալ որ երոպական կամ [ա]մերիկեան մամուլը գրէ բոլշէվիզմի մասին, մէկ հազարերորդը չի կրնար տալ այն ճիւղային ողբերգութեան, որուն մէջ կ[']ապրին գրեթէ աշխարհիս ժողովուրդներու մէկ երրորդը, այդ իրաւակարգը ճանչնալու համար մարդ պէտք է երկար ապրած լինի հոն եւ իր կաշուն վրայ զգացած լինի կարմիր բռնապետութեան լախտի հարուածները:

Ասկէ 15-20 օր առաջ քեզ դրկեցի փաստրմա, յոյս ունիմ մինչեւ հիմայ ստացած կը լինես:

Իմ կողմէ համբուրէ պալիկներդ, բարեւ Սրբուհուն:

Սիրով քո  
ՏՐԴԱՏ

**Ե.**

26 Յունիս 1957  
Ֆրէզնօ

Սիրելի Համաստեղ!

Ստացայ նամակդ, կը զարմանամ, որ դուն գոհ ես Ամսագրի մէջ գրածս յօդուածէն<sup>54</sup>, երեւի վրաս կը խնդաս, իմ յօդուածի կմախքը մինչ իսկ չէր մնացեր. բոլշէվիկները, որ գրաքննութեան մէջ ամեն սահման անցած են, դժուար թէ դրան հասցնէին: Վստահ եմ որ Դարբինեանը հակառակ իր կամքին այդ կոտորածը սարքեր է... երեւի մեր կեանքին մէջ ամեն ինչ կոտորածով պիտի սկսի եւ կոտորածով պիտի վերջանայ... կինտոն այսպիսի պարագաներուն *Մախլաս* կ[']ըսէ ու կանցնի...:

Ձեզ հետ ես ալ ուրախ եմ, որ Լօրիկը<sup>55</sup> այդպիսի մեծ յառաջդիմութիւն է կատարեր այդքան քիչ ժամանակի մէջ, եթէ հայ լեզուի սերը իր մէջ զարթներ է, մնացած կատարելութիւնը կրնայ քո ձեռքի տակ եւ հայ գրականութիւնը կարդալով լրացնել: Գլխաւորը հիմքն է, որ դրուեցաւ:

Բայց Արմինէիս<sup>56</sup> մասին ոչինչ չես գրած, գիտես որ ես նրան շատ կը սիրեմ, եւ շատ պիտի փափաքէի, որ ան ալ չի կորչեր հայութիւնէն: Հիմայ երեւի մեծ աղջիկ է դա[րձ]եր, բայց թէ ինչ ընդունակութիւններ ունի՞, այդ ալ ինձ շատ կը հետաքրքրէ:

Լսած կը լինես Դարբինեանէն, որ վերջապէս լուր առի, որ տղայքս ողջ են, եւ ուրախալին այն է, որ այդ զգուելի իրաւակարգին տակ փչացած չեն, երկուքն ալ նշանաւոր ինժեներ են, մէկը մինչ[եւ] իսկ փորձեսոր, խեղճերը իմ անունը չեն կրեր, այլ իրենց մօրը ազգանունով կը կոչուին, յայտարարած են որ իրենց հայրը մեռած են [sic]<sup>57</sup>: Այս ուրախալի լուրը եւ նրանց նկարները ինձ հասցուցած է *Աւերիք Իսահակեանը*<sup>58</sup>, որը եւ տուեր է այս մանրամասնութիւնները, եւ խնդրեր է, որ չի փորձեմ նամակ գրել, բայց յանձնարարեր է, որ շարունակեմ քննադատել բոլշեւիքները, միայն թէ երբեմն ալ *լաւ բաներ* գրեմ Հայաստանի մասին, ըսեր է որ իմ բոլոր գրածները ինք կարդացեր է<sup>59</sup>:

Է՛հ, սիրելիս այս օր այսքանով բաւականանք, մեծ յոյս ունիմ, որ Սեպտեմբերին կուգամ Ձեր կողմերը, թերեւս վերջի անգամը լինելով քեզ եւ Արտաշէսի<sup>60</sup> հետ մէկ ամիս անց[ը]նելու...

Ձերմ բարեւներս Սրբուհիին, կարօտի համբոյրներս Արմինէին:

Սիրով ու կարօտով  
**քո ՏՐԴԱՏ**

## **Ձ. Ռուբէն Տէր Մինասեան<sup>61</sup>**

27/յունիս 1949

Սիրելի Համաստեղ,

Ինչ որ կրակին կու տաս, ու վերջնական, այլեւս զղջալ չպիտի լինի: Քու պապերդ ալ կռապաշտ են եղած, չէ որ հանձնիթցի ես. հին թղթերիս մեծ մասը վառուած են: Մենք ինքներս փոշի ենք, փոշիի փոշու վրայ խօսիլը անելորդ բան է:

Շատ շնորհակալ եմ քու հրաւերիդ համար փոխադարձ կարօտներս առնելու համար, գամ ձեր երկիր, ձեր տունը՝ ուր վստահ եմ անկեղծ բարեկամներ կ'գտնեմ ձեր լյարկին տակը: Անշուշտ հրաւերիդ ծանրութիւնը կ[ը] ձգենք տիկնոջդ վրան եւ ոչ թէ քու, ուստի շնորհակալութիւններս անոր անելի կ[ը] վերաբերի, քան քեզի: Կ[ը] ցաւիմ, որ նոյն լայնսրտութեամբ, իմ կարօտս ալ հանգստացնելու համար, ես չեմ կարող քեզ եւ ձերայիններին հրաւիրել Ֆրանսիայ [sic], որ պակաս հետաքրքիր չէ, քանի որ չունիմ ոչ տուն եւ ոչ ալ հնարաւ[ը]րութիւն: Ես ալ հիւրի պէս բանըմ եմ: Քեզ պէս հրաւիրած էր քոյրս, որին զուցէ այլեւս չտեսնեմ, փեսաս թժ. Ծատուր Բաղդասարեանը<sup>62</sup>, Տրդատը<sup>63</sup> եւ այժմս ալ

մի երիտասարդ եկած, նոյնը կ[ը] կրկնեն: Բնաւ չեմ կասկածի[ր] անկեղծութեան վրայ, եւ եթէ հնարաւորութիւններ ունենայի, իհարկէ կ[']ուզէի թէկուզ վերջին մնաս բարովի համար գալ եւ վայելել բարեկամներին, բայց եթէ այդ վայելքը կ[ը] լինի ուրիշի տուած հնարաւորութեամբ, այդ կ[ը] դառնայ թոյն եւ ոչ թէ վայելք: Բացի ատկէ, անձնական կարօտներիս բաւարարելը նպատակ չէ. ընդհակառակը անոնց չբաւարարելը միջոց է նպատակին մօտենալու: Նպատակին համար է, որ մարդիկ պիտի վազ[վ]զեն ընդհանրական բարիք կամ չարիք հասցնելու, այդ վազ[վ]զած տեղը լինի դժոխք, թէ արքայութիւն. ես այդ նպատակը չեմ տեսնի դու ալ չես կրնայ ցոյց տալ. ուրեմն տեղերնիս ծանր նստենք ու մնանք:

Համամիտ չեմ քեզ հետ, որ արտասահման լինելն է պատճառը կուսակցութեանց աղ[ճ]ատման, վատասե[ր]ման. հայրենիքէն հեռաւորութիւնը անոր կրնայ դա[րձ]նել վերացական, բայց բնաւ երբեք վատասե[ր]ման: Մի մոռնար, որ Դաշնակցութիւնը սկսուած է արտասահմանէն<sup>64</sup>, ինչպէս եւ շատ կուսակցութիւններ եւ պահած են իրանց առողջութիւնը: Նկատի առ որ երկրի մէջ երբ էինք եղան պահեր, երբ մենք վատասե[ր]ուած էինք ասելի քան այժմ, ինչպէս օրինակ Մայիսեան դէպքերէն յետոյ մինչեւ մեր կործանումը<sup>65</sup>: Անկախ արտասահման կամ երկիր լինելէն, վատասե[ր]ումը անխուսափելի է, երբ ղեկավար ճանչցուածները կրնան երգել խուժանի նման «կ[']ուզես բօլշեւիկ լինիմ, կ[']ուզես հիթլերիստ լինիմ»[.],<sup>66</sup> երբ կ[ը] պակսի անոր մէջ հաւատը իւր կուսակցութեան նպատակների վրայ եւ ան կուսակցութիւնը կ[ը] նկատէ մի հայւան<sup>67</sup>, որի վրայ հեծած կ[']երթայ իւր նպատակներին եւ ոչ թէ գաղափարի: Դրա մէջ որոնիր բուն չարիքը եւ եթէ կրնաս դրա առաջն առ եւ ոչ թէ արտասահմանի մէջ որոնիր պատճառը: Եթէ երկու, երեք հաւատի մարդկանցով չկազմուիր մեր ղեկավարութիւնը, մենք կրնանք շարունակել մեր կուսակցութեան առողջ հոգեբանութիւնը, կրօնքը պահել. եթէ ոչ այն կ[ը] լինի, ինչ որ կայ, որ ժլատաբար չես ասի ինձ խնայելու համար:

Եղա՞ւ. դու չես կրնայ գրել, ինձի կ[']ըսես գրէ. այս ալ մի տարօրինակութիւն է[ ] եւ կը սխալիս. ես պիտի որ չգրեմ, այլ դու պարտաւոր ես գրելու: Ընթացիկ հոգսերէդ վեր եղիր, խեղդիր քո շնորհալի նկարներդ, հոգիները ստեղծիր. այդ կարող ես[.] եթէ Րաֆֆին<sup>68</sup> մի երկու սերունդ ստեղծեց, քու շնորհքը կրնայ անոր վրայ մի բան աւելցնել: Մարդիկ, եթէ չարին կ[ը] հետեւին, բայց թէ անոնք կ[']ատեն չարը, սուտը եւ ծարաւի են բարիին, ճշմարտին:

Ես շատ լաւ եմ, առողջ եւ երբեք այսքան հոգեկան անդորրութիւն չեմ ունեցած: Ինձ չարիք ուզողները ամենալաւ կեանքը ինձ տուեցին:

Համբոյրներով քեզ եւ ձերոնց

Ռ[ՈՒԲԷՆ]

Սիրելի Համաստեղ

Ստացայ անթուակիր նամակդ. եթէ իմ մասին լաւ բաներ պատմողը, մի քիչ ալ ինձի պատմէր, գուցէ օգտակար լինէր իմ չորցած արմատները թրջելու համար, բայց ես ոչ լաւը, ոչ վատը չեմ լսած. միայն ճշմարիտն ան է, որ շարունակ կը ջանամ գրել մտքէս անցածը եւ ճիշտն ասած անոր արժէքը չըզգիտեմ եւ չըզգիտեմ օգուտը, որ եթէ կայ, անոր արդիւնքը դժուար թէ տեսնիմ: Մի բան հաստատ է, որ տաղտուկը կը փարատէ եւ ժամանակս կը թուայ ինձի լիքը, այդ սուտ իսկ լինի, ինձ համար լաւ է]:

Յիշատակների<sup>70</sup> հրապարակման գործը ինձի ալ անձանօթ է, թէ ինչ վիճակի է: Արդէն կը լինի ամիս ու կէս Տրդատէն<sup>71</sup> եւ երկու ամիս Քարեանէն, որոնք ինձ գրողներն էին, չեն գրած: Անոնց կարգադրութեամբ Աստուրիին<sup>72</sup> ճամբած եմ երկու հատորներ եւ մնացածներն ալ հետըզհետէ [sic]. մնացածը ինչ կ[']ուզեն թող անեն:

Ուրախալին այն է, որ ունիս ընտանիք եւ փոքրիկներ եւ երբ սէրը կայ, ան մի ամրոց է, ուր որոտն ու կայծակ անկարող են այդ բերդի վրայ. թաղիր բոլոր վատ բաներ այդ բերդի մէջը եւ վերջացուր «Սպիտակ Ձիա[լ]որը» եւ նորը ստեղծիր: Ես համոզուած եմ, որ հայրենի հողի եւ բարքի դու վերջին գրողն ես: Լաւ վերջաբանն ալ մի արժէք է, ինչպէս արձանը մեռելին վրայ:

Կը ցաւիմ այդտեղի խռովեալ վիճակի եւ անվայել պայքարների համար<sup>73</sup>: Նպատակն ի՞նչ է այն ալ չեմ հասկանայ. մեր թշնամիներին ուրախացնելու համար է կարծես: Այժմս ես բարեբաղդութիւն կը համարեմ, որ երկուստէք անհրաժեշտ[օ]րէն մէջտեղէն դուրս ելնեմ եւ իմ ճգնարանը քաշուիմ: Այժմս ես անելիք չունիմ, բացի բաղձանքէն, որ ինչքան հնար է թող կրքեր խաղաղին:

Ես ոչ խնամուս<sup>74</sup>, ոչ Շաւարշին<sup>75</sup> չեմ տեսնի, որ բարեւներդ տամ, դու չես հասկանայ, որ ինչպէս շատերը կ[']ուզեն իմ ճգնաւ[ու]րութիւնը, ես ալ կ[']ուզեմ այդ եւ որքան քիչ մարդ տեսնիմ, այնքան առողջ եւ բնական կը դառնամ:

Այժմս մի նոր ծանօթ բարեկամ ունեցայ, այդ իմ թոռնիկն է Արէգ [sic] անունով<sup>76</sup>, որ թէեւ տակը կը շռէ, խ[օ]սիլ ու լալ չի գիտէ, բայց եւ այնպէս ինձ մտերիմ է:

Ես լաւ եմ, մի քիչ կարծեմ ոսկրացաւ ունիմ, եթէ նիւթականս ներեր ջրեր գնայի, գուցէ այդ ալ անցնեմ: Գոհ եմ տղաներէս<sup>77</sup>, կ[ը] յուսամ գիտութեան մէջ դէմքեր դառնան. այդ ճամբու վրայ են, թէպէտ շրջիկ, գործիչ լինել չեն ուզի եւ այդ ես ալ չեմ ուզէ: Քեզ երջանկութիւն եւ ջանք կը ցանկամ:

Համբ[ոյրներով] Ռ[ՌԻԲԷՆ]

**Ը. Սիմոն Վրացեան**

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ» ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ASSOCIATION CULTURELLE ARMÉNIENNE “HAMASKAÏNE”  
ՅՈՒՐԵԼԻՆԱԿԱՆ ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Հեռաձայն 28032  
Համար .....

Նախագահ  
ԳԵՐՇ. Տ. ԽՈՐԷՆ ԵՊՍ. ԲԱՐՈՅԵԱՆ  
Ատենապետ  
ՍԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆ  
Փոխ Ատենապետ  
ՅԱԿՈԲ ՏԷՐ ՄԵԼՔՈՆԵԱՆ  
Ատենադպիր  
ՏՕՔԹ. Ե. ԳՈՆԻԱԼԵԱՆ  
Գանձապահ  
ՌՈՒԲԷՆ ՄԱՎԻՍԱԳԱԼԵԱՆ  
Խորհրդականներ  
ԳՐԻԳՈՐ ՄԽԻԹԱՐԵԱՆ  
ԳԱՌՆԻԿ ԲԱՆԵԱՆ  
ՍՈՒՐԷՆ ՇԱՆԹ

Պէյրուֆ[,] Մարտ 8 1956

Սիրելի Համաստեղ

Առատութեանը սովորաբար երաշտ կը յաջորդէ. բաական ժամանակ է ստացած եմ վերջին անթուակիր նամակդ<sup>78</sup> եւ հազիւ այսօր պատասխանելու ժամանակ ու տրամադրութիւն գտայ: Վերջին ամիս չափէն աւելի շատ զբաղած է[ի]. սովորական աշխատանքներուս վրա[] աւելցաւ եւ կաթողիկոսական աղմկայոյժ ընտրութիւնը<sup>79</sup>: Ընտրեցինք, վերջացաւ, բայց դեռ քաշելիքներ ունինք, կարծեմ:

Նախ՝ փակիր «Սպիտակ Ձիաւորի» հաշիւը: Ստացուած է 19 օրինակ, ծախուած է սէթ<sup>80</sup> 25 [[իբանանեան] ոսկիով. ուրեմն 19 x 25 = 475 լիբ[անանեան] ոսկի: Մէկ տոլար = 3,20 [[իբանանեան ոսկի]: Ուրեմն<sup>81</sup>, կլոր թիւով = 150 տոլար: ՀՕՄ-ի<sup>82</sup> միջոցով ստացած ես 120 տոլար. ուրեմն՝ ունիս ստանալիք ես 30 տոլար: Ուրեմն, խնդրեմ այդ գումարը ստացիր ՀՕՄ-էն, իմ հաշւոյն. ես այստեղ կը հաշակցիմ: Կամ, եթէ կլ[']ուզես, յանձնեմ Ճեմարանի տնօրինութեան քո հաշւոյն, որպէսզի, երբ Լորիկը գայ, անոր տրփ, իբրեւ գրպանի ծախս<sup>83</sup>: Եղիցին կամք քո...

Ամսագրի վերջին համարի գրածքդ<sup>84</sup> կարդացի անհուն հաճոյքով, մանաւանդ որ շատ համապատասխան է իմ հոգեկան տրամադրութեան: Գրականութեան մէջ, ինձ համար ամենէն աւելի է անկեղծութիւնը եւ անմիջականութիւնը: Անկեղծ շունչով ես գրած եւ ասոր համար կը վարակէ ու կլ[']ապրեցնէ ընթերցողը:

Որպէսզի ես ալ անկեղծ ըլլամ, ըսեմ, որ չհաւնեցայ ու չսիրեցի յրբելինական յօդածը «Ասպարէզ»-ի մէջ<sup>85</sup>: Բնական է, որ յրբելինական գրութեան մէջ միայն գովեստ կ'ըլլայ, բայց գովեստն ալ պէտք է հիմնով իրականութեան վրայ]: Քո յօդածը ցոյց կու տայ, որ դու ծանօթ չես Դարբինեանի անցեալին, բայց կը խօսիս, իբր շատ մօտէն ծանօթ, լաւ չէ Համաստեղի համար:

Տարօրինակ էր նոյնպէս եւ «Ասպարէզ»-ի նոյն համարի մէջ գրած 1905 թ.-ի լուսանկարը երկրի Յատուկ Մարմնի անդամ Դարբինեանի եւ քովը՝ կնոջ, Նատիայի: 1905-ին Դարբինեանը դեռ ուսանող էր Մոսկուայի համալսարանի<sup>86</sup> եւ երկրի Յատուկ Մարմնի անդամ չէր, իսկ Նատիան դեռ տիկին Վարդանեան էր<sup>87</sup> եւ մինչեւ տիկ. Դարբինեան դառնալը եղաւ տիկ. Լեւոնեան, Օսմանեան Սահմանադրութենէն ետքը:

Չհաւնեցայ եւ երրորդ բան մը – կարծես մաքսանենգութեամբ տօնուեցաւ Դարբինեանի յրբելեանը, աշխարհիս մէկ անկիւնին մէջ<sup>88</sup>: Բոլորովին համամիտ եմ քեզի հետ, որ հասարակութիւնը պէտք է գնահատէ հանրային վաստակաւոր դէմքերը, եւ յրբելեանը միայն գրագէտներու կամ արուեստագէտներու մենաշնորհը չէ: Կարելի է տօնել եւ խմբագրի մը կամ հանրային գործիչի մը, նոյնիսկ յեղափոխականի յրբելեանը: Էականը յրբելեարը չէ, այլ մատուցած ծառայութիւնը ազգին, եւ եթէ ազգը արժանի կը նկատէ մէկը յրբելեանի, ինչո՞ւ չտօնել:

Եթէ պէտք է տօնել Դարբինեանի յրբելեանը, իբրեւ հատուցում իր երկար տարիներու մատուցած ծառայութեան ազգին, պէտք էր տօնել վայելուչ կերպով, համազգային տարողութեամբ, ամէն տեղ, ուր իր աշխատանքը յարգողներ կան, եւ ոչ թէ միայն Քալիֆորնիոյ մէջ, քանի մը հարուստներու նախաձեռնութեամբ: Դրամը ի՞նչ տեղ ունի մէկու մը հանրային արժէքը գնահատելու գործին մէջ: Եթէ քեզի համար այդ ձեւի յրբելեան սարքէին, կ'ընդունէի՞ր:

Կը ներես. ականայ r[é]plique<sup>89</sup> եղաւ նամակիդ:

Երկու տող Սրբուհին ալ պիտի գրէի, բայց նամակս երկարեցաւ: Սրբուհին պիտի խնդրէի, թէ կարելի է, փութացնել տար ՀՕՄ-ի Կեդր. Վարչութենէն խնդրածս վկայականս: Եթէ ամիս մըն ալ ուշանայ կամ ոեւէ պատճառով չտան նման վկայական, ստիպւած պիտի լինեմ ամառը նորէն Ամերիկա գալ եւ կամ զրկել ամերիկեան քաղաքացիութենէն պահելու համար Ճեմարանի տնօրէնութիւնը<sup>90</sup>:

Սիրով՝ Ս. ՎՐԱՅԵԱՆ

**Թ. Գրիգոր Շահինեան<sup>91</sup>**

Պէյրութ, 19 Ապրիլ 1962

Սիրելի վարպետ

Այս բացառիկ ուշացումը չեմ կրնար արդարացնել. յանցաւոր եմ: Միայն կրնամ չքմեղանքներ ներկայացնել, որոնցմէ ամենէն կարելորը գիրքիս

հրատարակութիւնն է<sup>92</sup>: Արդէն իսկ տպագրութիւնը վերջացած է եւ վաղը հրապարակ կը հանուի: Շուտով կը ստանաք ձեր օրինակը:

Իմ բազմազբաղ վիճակիս պատճառով քիչ մը ձգձգուեցաւ տպագրութիւնը, բայց կրնամ ըսել որ արեւի խնամուած եղաւ: Ուղիղ 244 էջնոց հատոր մըն է, նախկինի<sup>93</sup> ծաւալով ու թուղթով: Էջերը քիչ մը արեւի երկար են: 15 հեղինակի մասին յօդուած կայ եւ իւրաքանչիւրին ալ գծուած նկարը: Առաջին յօդուածը տեսական է՝ «Գրականութեան մասին եւ գրադատութեան» վերնագիրով:

Այս հրատարակութեան նիւթական պայմանները բաւական ձեռնտու են: Հրատարակիչը Մշակ տպարանն է: Ես միայն նախնական ծախսերը հոգացի, մնացածը տպարանը յանձն առաւ: Ես այս ձեռով միայն 300 լիբլանանեան] ոսկի կը կորսնցնեմ անցեալ տարուան 600ին տեղ, իրենք ալ ծախսերնին կը հանեն եւ գործ մը ըրած կ'ըլլան: Շահի մասին մտածող արդէն չկայ:

Չմոռցած ըսեմ որ ժամանակին ստացած [եմ] 10 տոլարի ձեր չէքը<sup>94</sup>: Ստացայ նաեւ 30 թէ 35 տոլարի չէք մը՝ «Հայրենիք»ի<sup>95</sup> վարչութենէն, սիրալիր նամակի մը հետ: Կրկնապէս շնորհակալ եմ ձեզի:

Եթէ այս երկրորդ հատորին հետ նախորդէն ալ քանի մը հատ ծախուի՝ մեծ նպաստ կ'ըլլայ: Տակաւին բաւական մեծ թիւով օրինակներ կը մնան, հակառակ որ 700 օրինակ միայն տպած էի եւ բաւական նուէր դրկած, 200-250 օրինակ:

Վերջերս Հայաստանի գրողներու միութեան քարտուղարը հոս էր. Եդ. Թովիչեանը<sup>96</sup>: Խորքին մէջ թէեւ բարի եւ ուղղամիտ՝ բայց նեղ մտածող եւ կիրք ունեցող մարդ է: Բաւական իրարանցում ստեղծեց իր անզիջող կեցուածքով ու խօսքերով: Հետը տեսնուելու առիթը ունեցայ եւ բնականօրէն խօսեցայ նաեւ ձեր մասին: Նախկին գրածներս արդարացան: Մեծ փափաք կայ ձեզ Հայաստան տեսնելու: Ինչ կը վերաբերի ծախսին՝ հետեւեալ ձեռի լուծում մը կայ: Անշուշտ եթէ երթաք՝ կը տպեն ձեր գործերը եւ պատուագին կը վճարեն: Այդ վճարը լիովին կը փակէ ձեր բոլոր ծախսերը եւ բան մըն ալ կ'աւելնայ տակաւին: Հարկաւ ուրբիով կը վճարեն, բայց դուք կրնաք տոլարի վերածել ձեր ստացածը՝ Կաթողիկոսի<sup>97</sup> միջոցով: Դուրսը գումարներ ունի ան եւ շփումի մէջ է զանազան անձերու եւ կազմակերպութիւններու հետ:

Արմինէն նուազ յաճախ կը տեսնեմ հիմա<sup>98</sup>. Իր ազգականուիիին տունն է<sup>99</sup>: Հայերէն լեզուի դասերէն դուրս՝ կը հետեւի նաեւ կարգ մը ուրիշ դասերու, եւ, որքան գիտեմ՝ բաւական յառաջդիմած է:

Վերջացնելէ առաջ՝ սրտագին շնորհակալութիւն պէտք է յայտնեմ ձեր հոգածու վերաբերումին եւ խորհուրդներուն համար: Ինքզինքս հպարտ կը զգամ ձեր գնահատանքին ու քաջալերանքին արժանացած ըլլալուս համար:

Բարեւներ՝ Տիկինին եւ Լորիկին:

**Ժ. Բաբգէն Փափազեան<sup>100</sup>**  
**Dr. P. K. PAPAŽIAN**  
**MALADIES INTERNES ET DES ENFANTS**  
RUE DE L'ARMÉE  
IMM. DEYIRMENJIAN  
TÉL. Clin.  
Resid. 259609

Պէյրուս, 17 Փետրուար 1965

Շատ սիրելի Համաստեղ

Նամակդ սեղանիս վրայէն ինծի կը նայի, ու դատապարտութեան խօսք կ'ըսէ, արդէն ամիս մըն է որ հոն է, ու ամիս մըն է որ ինծի համար ցաւ է, ամէնօրեայ ցաւ, որ փոխանակ սրտիս ուզածը ընելու եւ իսկոյն երկար զրոյցի նստելու հետոյ, ստիպուած եմ կատարել այլ աշխատանքներ, որոնք նոյնպէս սրտիս մօտ են իրենց ամբողջութեանը մէջ առած, որոնք սակայն հեռաւոր արդիւնքներով կրնան բաւարարութիւն պատճառել, մինչդեռ հետոյ խօսակցութիւն մը՝ անմիջական բաւարարութիւնը պիտի բերէր:

Հայաստան այցելութիւնս, ու հետեւանքները, հոգեկան աշխարհի ներքին մտորումները, ներքին պայքարները, փնտռութիւնները, հիասթափութեանց ու գոհունակութեանց իրար զարնուող տպաւորութիւնները, լեռնական գիւղացիներու պղնձագոյն դէմքերը, քաղաքացիներէն ոմանց քաղքենիացած դէմքերն ու ապրումները, ասոնք բոլորը կը դառնան ներսս, ելքի ճամբայ մը կը փնտռեն, ու չեն գտներ. ցարդ:

Յօդուածներով հրապարակ գալուն համաձայն չենք, հրապարակային դասախօսութիւններով կրնայի մաս մը պարպել՝ ասոր ալ համաձայն չենք առայժմ. անշուշտ քննելէ ետք թերն ու դէմը: (Այս ուղղութեամբ Ընկ. Խաշմանեանը<sup>101</sup> դժգոհ մնաց մեզմէ, որովհետեւ Լիբանանի մէջ նման զեկուցումներու համաձայն չէինք, եւ չենք, իսկ ինք Պարսկաստանի մէջ զեկուցումներ տուած է, եւ այն կարծիքին է թէ օգտակար եւ անհրաժեշտ են անոնք: Արդ՝ որպէս մարդ, որպէս անհատ եթէ դատելու ըլլանք, ճիշդ է իր տեսակէտը. սակայն եթէ քննելու ըլլանք հարցին քաղաքական երեսները, հետեւանքները նաեւ այլ անկիւններէ, կրնայ մարդ, կարելի է հասնիլ այն եզրակացութեան թէ նախընտրելի է ներկայիս, առայժմ գէթ, լռութիւն պահել հրապարակաւ, մամուլով կամ բեմերէն. անելի եւ ժամանակ տալու համար հարցի թէ քննութեան, եւ թէ որոշ հոլովոյթ կրելուն): Որով ներքին ճնշումը կը մնայ: Չմեկնած Հայաստան, պատմուածք մը սկսած էի, երգի պարի անսամպլին ներկայ գտնուող հայու մը ներքին դժգոհանքովը[,] ներքին հարցականներովը

հիմնաւորուած. չէի աւարտած, չեմ աւարտած նաեւ այսօր, սակայն կամաց կամաց դառնալու վրայ է անյաղթելի պահանջ, եւ թերեւս «տամառ»<sup>102</sup> բռնէ ու ամբողջացնել կարենամ. այդ պարագային անկասկած որ մէջը պիտի հոսի նաեւ Հայաստանէն առնուած ապրում ու տպաւորութիւն: Ատիկա թերեւս քիչ մը պարպել կարենայ ներսս հաւաքուող ճնշումը:

Մինչ այդ սակայն, ուժս տուեր եմ մատի վրայ համրուող երկու երեք հոգիի հետ զրոյց ընելուն, զրոյցով ինքզինքս պարպելու փորձին:

Ամէն զրոյց որ գրաւոր տեղի կ'ունենայ, անպայման կիսատ կը մնայ. միախաւ կ'ըլլայ, միակողմանի (մինչեւ անգամ երբ կը փորձես հարցերը իրենց բոլոր երեսներով քննել) կը դառնայ, որովհետեւ սկսուած մտածում մը կը շարունակուի, կը կազմէ առանցքը գրուածին, մինչ անդին, այլ մտածումներ, նոյնպէս իրական, նոյնպէս հարագատ, կը մնան մութին մէջ, ապա ուրեմն չեն բերեր իրենց լրացնող երանգը, եւ պատկերը կ'ըլլայ թերի, կամ չափէն ասելի, կամ չափէն քիչ շեշտաւորուած: Երբ կը գրէի ձեզի, կամ Արամ Հայկազին<sup>103</sup>, կամ Լեւոն Քարմէնին<sup>104</sup> Պաղտատ, ամէն անգամուն ալ, աւարտելէ ետք նամակս, դժգոհանք մը կը մնար (հիմա ալ պիտի մնայ գիտեմ) որովհետեւ կը զգայի թէ չկրցի ամբողջացնել, կարելի չէ մէկ անգամով ամբողջացնել, թերեւս կարելի չէ բնաւ, երբէք [sic] կարելի պիտի չըլլայ հաւանաբար, ամբողջացնել: Պակաս մնացածները յետոյ, հետագային ըսելով ինքզինքս կը համոզեմ:

Ահա պակաս մնացածներէն մէկ երկուքը՝

Շատ ճիշտ սահմանած էիք, երբ կ'ըսէիք թէ «Մի քանի սերունդ մեծցած է այդ ռէժիմին»<sup>105</sup> տակ եւ արդէն թանձր նախապաշարումը բռնած է մեր եւ անոնց մէջ»: Սակայն կայ ուրիշ կէտ մը, որ այս սահմանումը կը խախտէ, եւ անկատար կը դարձնէ: Նոյն այդ ռէժիմի ՍԱՐՍԱՓԻՆ ՊԱՏՃԱՌՈՎ, մինչեւ այսօր ալ, կը շարունակեն մարդիկ ԻՐԱՐ ԶԿՍԱՀԻԼ, ԻՐԱՐՄԷ ԿԱՍԿԱԾԻԼ, ԶԿՍԱՀԻԼ ՆԱԵԻ ՔԵԶԻ՝ արտասահմանէն եկողիդ: Երկրորդ՝ նոյն ռէժիմի պահանջներուն գոհացում տալու համար, գրեթէ տեսաբար կը կրկնեն ՀՐԱՀԱՆԳՈՒԱԾԸ, ԵՒ ՈՉ ԹԷ ԻՐԵՆՑ ԶԳԱՅԱԾԸ:

Մեր ունեցած նախապաշարումները, եթէ կան, համայնավարութեան դէմ են, ամէն անգամ որ համայնավարութենէն եկող քայլի մը, պահանջի մը կը հանդիպինք. սակայն երբ ԶՈՒՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՊՐՈՒՄԻ ԿԱՄ ՊԱՀԱՆՋԻ ԿԸ ՀԱՆԴԻՊԻՆՔ, ՄԵՆՔ ԻՍԿՈՅՆ ԿԸ ՀԱԼԻՆՔ, ՍԱՌՅՅՅԻ ՓՈՒՍԱՐԷՆ ԿԸ ԴԱՌՆԱՆՔ ՀԱՅՈՒ ՏԱՔ ՍԻՐՏ, նոյնը չէ պարագան Հայաստան ապրող հայուն. ան ՉԻ ԿՐՆԱՐ ՀԱԼԻԼ, ՆՈՅՆԻՍԿ ԵԹԷ ԿԸ ՏԱՌԱՊԻ ԱՏՈՐ ՀԱՄԱՐ: Ոմանք ալ իսկոյն կը հալին՝ որովհետեւ այդ հրահանգը ստացած են, որով կը ստեղծուի տառապանք առթող դրութիւն մը՝ կամ դիմացինդ իր սիրտը չի երկարեր քեզի, ու կը ցալիս, կամ արուեստական ձեով կ'երկարէ, ու դարձեալ կը ցալիս: Կը սկսիս փնտռուողի, ու կը գտնես անշուշտ, սակայն այնպէս, հպանցիկ ձեով, որ ծարաւդ չի յագենար: Ուրեմն.. կարելի է եզրակացնել հայրենիքի մէջ

հայկականության փնտռուքն ու պահպանումը անլի քան արտասահմանի մէջ...

Եթէ արտասահման ըսելով Միջին Արեւելքի մեր ժողովուրդը նկատի ունենամ, կը դժուարանամ դրական պատասխան մը տալու այդ հարցումին: Եթէ նկատի առնեմ հողին, ժայռերուն, դժուարութիւններուն իսկ բերած ներքին պահանջը, ներքին ծառացումը հայուն, կրնամ ըսել[՝] այո, պարզ է որ անլի է հոն, ու անլի պիտի ըլլայ միշտ: Սակայն երբ նկատի կ'առնես այդ ապրումին արտայայտուելու ազատութիւնէն [sic] զուրկ ըլլալը, անոր տարափոխիկ ջերմութեան բացակայութիւնը տառապանք մըն է, եւ մտածել կու տայ թէ արտասահմանի ազատօրէն արտայայտուող ազգային ապրումը անլի արժէ քան Հայաստանի մէջ գոյութիւն ունեցող, սակայն լոյս աշխարհ գալ չկրցող ապրումը: Անլի արժէ առնուազն նորանոր սերունդներու հոգեկան աշխարհի հարստացման, զանոնք մեզի, հայութեան կապելու տեսակէտէն:

Ուրե՛մն... ահա նորէն սկսաւ ոլորապտոյտը, որուն մէջ ինկողը դուրս գալ չի կրնար այլեւս:

Իսկ երբ կը մտածես տիրող իշխանութեան, տիրող կուսակցութեան բարոյական բոլոր ապրումներն ու զգայնութիւնները մէկդի նետած ըլլալու ԲԱՅԱՐՁԱԿ ԻՐՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ... երբ կ'անդրադառնաս որ ՍՈՒՏԸ ԳԼԽԱԻՈՐ ԶԷՆՔ ԵՆ ԸՐԱԾ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԵՆՑ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒՆ... այս անգամ կը մտածես, թէ տրուած յարաբերական ազատութիւնները, ազգայնական ապրումներու արտայայտութեանց որոշ թոյլտուութիւնը ԻՆՂ ԿԸ ԾԱԾԿԵՆ ԻՐԵՆՑ ԵՏԻՆ, ԻՆՂ ՆՊԱՏԱԿ ԿԸ ՀԵՏԱՊՆԴԵՆ, ի՞նչ ձեռով եւ ե՞րբ պիտի հարուածեն մեր ազգը, հայրենիքը, ազգայնականութիւնն ու հայրենասիրութիւնը... այն ժամանակ կը սկսի նոր ոլորապտոյտ մը: Նախապաշարո՞ւմ է արդեօք, թէ պայծառ իրողութիւն: Ի՞նչ չափով պէտք է ընդունիլ զայն, ի՞նչ չափով պէտք է ինքզինք ծախուած ցոյց տալ, ի՞նչ չափով պէտք է իրար խափուիլ [sic], ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ, ՀԱՅՐԵՆԻՔԻ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ, ԱՌԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՆՆԵՐՈՒ ԶԱՂԱՑՔԻՆ ԶՈՒՐ ՀԱՍՑՆԵԼՈՒ...

Այս հարցումները կարելի է չտալ, կարելի է բաւարարուիլ հանդիպած ազգային գիտակցութեան կայծերով, կրակներով երբեմն, ու գոհացած՝ փակել աչքերը. զանոնք վերստին բանալու համար միայն այն օրը, երբ նոր կարաւաններ ճամբայ ելլեն դէպի Սիպերիա, կամ այլուր, երբ հայ գրագէտներու նոր խումբեր զոհաբերուին բոլջելիկեան զոհասեղանին, երբ արդէն շատ ուշ ըլլայ, եւ հայութեան հոգիները զինաթափուած ըլլան՝ արդէն իսկ խափուած [sic] ներկայիս փչող ազգայնական հովերէն:

Պէտք է օգտուիլ, օգտագործել ազգայինը, հայրենականը:

Պէտք է մերժել, պէտք է միշտ յիշեցնել ու մերժել՝ պարտադրուած վարչաձեւն ու վարդապետութիւնը: Դիւրիւն [sic] գործ է: Չեմ կարծեր: Այս իրողութիւնը բացատրելն անգամ դիւրին չեմ համարեր:

Շատ խօսեցայ, շատ գրեցի կարծեմ: Կարօտի տաքուկ բարեւներ բոլոր տնեցիներուն, տիկ. Մխիթարեանին<sup>106</sup> եթէ հանդիպիք, եւ հարցնողաց:

ԲԱԲԳԷՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> Արամ Հայկազ, *Նամակներ*, Երեւան, «Տիգրան Մեծ» Հրատ. 2009, էջ 106:

<sup>2</sup> Համաստեղ, Թղթածրար:

<sup>3</sup> Ոչ-նամակային նիւթ մը, որ ըստ երեւոյթին թիրիմացաբար մնացած է թղթածրարին մէջ, Համաստեղի ու *Hairenik Weekly* անգլերէն շաբաթաթերթի խմբագիր Ճէյմզ (Յակոբ) Մանտալեանի (1888-1973) միջեւ պայմանագրի մը մեքենագիր պատճենն է: 21 Մարտ 1942 թուակիր վաւերագիրը, գրուած՝ «Հայրենիք» ընկերակցութեան նամակաթուղթի վրայ, կը հաստատէ, որ Մանտալեան՝ Համաստեղի «Քաջ Նազար» պատմուածքը (լոյս տեսած՝ *Հայրենիք* ամսագրի Յուլիս եւ Օգոստոս 1940ի թիւերուն մէջ, ապա՝ *Քաջ Նազար* եւ *13 Պարմուածքներ*, Գահիրէ, Տպ. «Յուսաբեր», 1955) թարգմանած ըլլալով, կը պարտաւորուէր զայն հրատարակել *Hairenik Weekly*ի մէջ (հրատարակութիւնը անձանօթ է մեզի) եւ այնուհետեւ՝ փորձել զայն վաճառել շարժապատկերի ընկերութեան մը: Պայմանագրին բնագիրը կ'ըսէ հետեւեալը. «The signatories of this contract, Hamasdegh, and James G. Mandalian, have agreed upon the following:

1 – Hamasdegh, author of the short story, “Nazar the Brave”, permitted Mandalian to translate said story from the Armenian original into English.

2 – After publishing the story in Hairenik Weekly, Mandalian will use his means to sell it to some motion picture company, with the understanding that the negotiations shall be carried on, and if successful, the contract shall be signed, in the name of, and by Hamasdegh, the author of the story. The author has the right to accept or reject the offered sum.

[3 –] For his services as translator and agent, in the instance of his selling the story, Mandalian shall receive 25% of the sum received by the author. The author is not responsible for expenses incurred in the process of selling the manuscript, or for amounts paid to secondary agents. In case the manuscript is sold, Mandalian shall meet the above-mentioned expenses from his promised share.

4 – To complete his labors, Mandalian shall have four months from the date of this contract, and if at the end of four months the manuscript is sold, the right to republish the manuscript, or to utilize it in any other way, shall revert to the author, Hamasdegh. In case the manuscript is not sold in four months, the complete rights to the story shall likewise belong to the author»:

<sup>4</sup> Ռուբէն Դարբինեան (1885-1968)՝ քաղաքական գործիչ ու հրապարակագիր, *Հայրենիք* Օրաթերթի խմբագիր 1922-1952ին, նաեւ «Հայրենիք» միս հրատարակութիւններուն խմբագրապետ:

- <sup>5</sup> Տե՛ս՝ Համաստեղի 30 Դեկտեմբեր 1928ի նամակը Ռուբէն Դարբինեանին («Համաստեղի Նամակները», *Հայրենիք Ամսագիր*, Ապրիլ 1964, էջ 12-15. վերատպումը՝ Համաստեղ, *Նամականի*, կազմող՝ Մ. Խաչատրեան, Հրատ. Կարպիս Լ. Նազարեան Հիմնադրամի թիւ 6, Երեւան, «Մուլնի» Հրատ., 2003, էջ 127-129):
- <sup>6</sup> Մեծ Եղեռնի վերապրող Գրիգորիս Եպս. Պալաքեանը (1877-1934) Հարաւային Ֆրանսայի թեմի առաջնորդն էր 1927-1934ին:
- <sup>7</sup> Տե՛ս՝ Համաստեղ, «Կորին Մկրտիչեան», *Հայրենիք Ամսագիր*, Փետրուար 1929, էջ 42. Կորին Մկրտիչեան, «Բանաստեղծութիւններ», էջ 43:
- <sup>8</sup> Կորին Մկրտիչեանի մնացեալ բանաստեղծութիւնները լոյս տեսած են *Հայրենիք Ամսագիրի* Մարտ, Ապրիլ, Յուլիս, Օգոստոս, Սեպտեմբեր 1929ի եւ Յունուարէն մինչեւ Մայիս 1930ի թիւերուն մէջ:
- <sup>9</sup> Մաննիկ Պէրպէրեան (1885-1960)՝ արձակագիր, երգչուհի, մանկավարժ Ռեթեոս Պէրպէրեանի դուստրը:
- <sup>10</sup> 30 Դեկտեմբեր 1928ի նամակին մէջ, Համաստեղ Դարբինեանին յայտնած էր, թէ «չորս օրէն կը մեկնիմ Նիս: Կը յուսամ՝ հոն կը հանդիպիմ Մաննիկ Պէրպէրեանին: Այդ տեղէն կը գրեմ նորէն» («Համաստեղի Նամակները», էջ 15. նաեւ՝ Համաստեղ, *Նամականի*, էջ 129):
- <sup>11</sup> Նոյն նամակին մէջ, Համաստեղ անւցուցած էր, թէ «Նիս երկու շաբաթ մնալէ յետոյ, պիտի մեկնիմ Եգիպտոս»:
- <sup>12</sup> Նիկոլ Աղբալեան (1873-1947)՝ գրականագէտ, մանկավարժ, քաղաքական գործիչ, Հայաստանի առաջին Հանրապետութեան Կրթութեան նախարար:
- <sup>13</sup> Համաստեղ Փարիզէն գրած իր 18 Հոկտեմբեր 1928ի նամակին մէջ յայտնած էր, թէ «մօտերս Ն. Աղբալեանը կ'ակնկալէին այս տեղ: Կ'ուզէի մեկնելէս առաջ տեսնուիլ հետը» («Համաստեղի Նամակները», էջ 9. նաեւ՝ Համաստեղ, *Նամականի*, էջ 124): Սակայն, յաջորդ նամակներուն մէջ Աղբալեանի մասին ակնարկութիւն չկայ:
- <sup>14</sup> Ակնարկութիւնը ՀՅԴաշնակցութեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի մասին է: Հմմտ.՝ Համաստեղի 20 Օգոստոս («Ակամայ մրտահոգուած ենք, թէ գործերը ի՞նչպէս ետլա կ'երթան նոր ընտրուած թաղական աղաներուն հետ»), 18 Հոկտեմբեր («Չգիտեմ ինչո՞ւ, նամակներուս մէջ միշտ կ'ուզեմ աղաթաղականները յիշեցնել: Կը յուսամ գործդ լաւ կ'երթայ հետերնին») եւ 14 Նոյեմբեր 1928ի նամակները («Այդ տեղի աղաթաղականները, կը յուսամ, փիսփինթի բաներով չեն զբաղեցներ Ձեզ ու կ'աշխատիք խաղաղ տրամադրութիւններով») (Համաստեղ, *Նամականի*, էջ 120, 125, 127):
- <sup>15</sup> ՀՅԴաշնակցութեան ԺԱ. Ընդհանուր Ժողովը տեղի ունեցած է Փարիզ, 17 Մարտ-2 Մայիս 1929ին:
- <sup>16</sup> Ռուբէն Տէր Մինասեան (1882-1951)՝ ֆետայի եւ կուսակցական գործիչ:
- <sup>17</sup> Սիմոն Կրացեան (1883-1969)՝ կուսակցական գործիչ ու գրագէտ: Եղած է Հայաստանի առաջին Հանրապետութեան վերջին վարչապետը:
- <sup>18</sup> Արշակ Զամալեան (1885-1940)՝ կուսակցական գործիչ:
- <sup>19</sup> Նշան Թաշճեան (1881-1945)՝ կուսակցական գործիչ (արհեստով՝ ատամնարուժ):

<sup>20</sup> Արմենակ Բարսեղեան (1883-1949)՝ կուսակցական գործիչ, խմբագիր: Փիլիսոփայության դոկտոր էր Պերլինի Համալսարանէն: 1928ին «Հայրենիք»ի գործավար նշանակուած էր:

<sup>21</sup> Փակ խումբ (անգլերէն):

<sup>22</sup> 1929ի Պատգամաւորական Ժողովին, Ռ. Դարբինեան կարդացած է «Հայրենիք»ի տեղեկագիրը, ուր պահանջած է կարգ մը հիմնական փոփոխութիւններ: Այդ տեղեկագիրը նախօրօք «բուն քննադատութեան եւ ընդդիմութեան» հանդիպած էր՝ Կեդր. Կոմիտէին ներկայացնելու ատեն: Ժողովին ընթացքին, պատմած է Դարբինեան. «դժբախտաբար, Կեդր. Կոմիտէի մէկ-երկու անդամներուն, ինչպէս ե՛ւ մէկ-երկու գործիչ ընկերներուն հետ իմ վէճը ա՛յնքան սուր բնոյթ ստացաւ, եւ անոնք թոյլ տուին իրենց ընելու այնպիսի վիրաւորական արտայայտութիւններ իմ հասցէին, որ ես չափազանց վրդովուած՝ որոշեցի ձգել խմբագրութիւնը եւ չմասնակցիլ այլեւս Պատգամ. Ժողովի հետագայ նիստերուն»: Խմբագրութենէն հեռանալով, Դարբինեան երկու անգամ ընդունած է Կեդր. Կոմիտէի վերընտրեալ հերթապահ տոքթ. Ն. Թաշճեանի այցելութիւնը, որ «ամենէն վիրաւորական դիրքն էր բռնած ինձ հանդէպ», խնդրելով որ վերադառնար գործի: Սկզբնական մերժումէ ետք, ան զիջած է իրեն կատարուած բազմաթիւ դիմումներուն բերումով (Ռ. Դարբինեան, «Կեանքիս Գրքէն», *Հայրենիք Ամսագիր*, Նոյեմբեր 1961, էջ 28-30. հմմտ. նոյն՝ «Կեանքիս Գրքէն», *Հայրենիք Ամսագիր*, Մարտ 1962, էջ 15-16): Դարբինեան հեռացած է խմբագրութենէն 20 Յուլիս 1929ին եւ վերադարձած՝ հաւանաբար 21 Նոյեմբերին (James H. Tashjian, “Two Newly-Discovered English-Language Journals, or Work-Books, of Reuben Darbinian, Late Editor-in-Chief, Hairenik Publications,” *The Armenian Review*, September 1980, էջ 254-258):

<sup>23</sup> Ասատուր Խտրեան (1893-1955)՝ կուսակցական գործիչ:

<sup>24</sup> Հաւանաբար կ'ակնարկէ կուսակցական գործիչ Կարապետ Սարաֆեանին (մ. 1946), որ ծագումով խարբերոցի էր՝ Համաստեղի պէս (Ստեփան Տարտունի, Հ.Յ.Դ. Յիշատակարան Հիւս. Ամերիկայի, 1899-1984, Պոստոն, Տպ. «Հայրենիք», 1988, էջ 75):

<sup>25</sup> 1928ին Զատիկ Մաթիկեանի ստորագրութեամբ Նիւ Եորքէն թղթակցութիւն մը *Հայրենիք Օրաթերթին* մէջ կը յայտնէր, թէ Վահան Գարտաշեանի գրասենեակէն ձերակուտականի մը գրութիւնը լուսանկարուած ու ապա հրատարակուած էր հակադաշնակցական անձի մը կողմէ: Խնդրոյ առարկայ անձը անուանարկութեան դատ բացած էր Դարբինեանի դէմ, որպէս պատասխանատու խմբագիր.

«Եւ օր մըն ալ երկու ոստիկաններ եկան խմբագրատուն եւ, իմ ձերբակալման հրամանագիրը ցոյց տալով ինձ, տարին զիս ոստիկանատուն: Հոն պարզուեցաւ որ քրէական գրպարտութեան դատ էր բացուած իմ դէմ այդ հակադաշնակցական պարոնին կողմէ:

Կէս ժամ չանցած, ընկերները բերին զիս ազատ արձակելու համար պահանջուած 1000 տոլարի գրասականը, եւ ոստիկանութիւնը իսկոյն զիս ազատ արձակեց:

Շաբաթներ յետոյ, տեղի ունեցաւ: Բայց դատավարութիւնը դարձաւ պարզ ձեւականութիւն մը, որովհետեւ մեր ընկ. Յ. Պարոյրեանը խօսած էր ինձ դէմ

---

դատ բացող հակադաշնակցական պարոնին հետ եւ բաականին կոկիկ գումար մը իրեն տալու խոստումով յաջողած էր համոզել զայն, որ յետ վերցնէր իր մեղադրանքը» (Դարբինեան, «Կեանքիս Գրքէն», *Հայրենիք Ամսագիր*, Փետրուար 1962, էջ 27. ընդգծումը բնագրային է):

Խօսքը հրապարակագիր, *Armenia* (այդ ժամանակ՝ *New Armenia*) ամսագրի խմբագիր Արշակ Մահտեսեանի (1879-1950) մասին էր: Տե՛ս՝ Դարբինեանի անգլերէն օրագիրը՝ 17 Դեկտեմբեր 1928 թուականին տակ, ուր ան յիշած է, թէ երեք օր առաջ երրորդ անգամ քաղաքապետական դատարան զացած էր՝ «ոմն Ա.Մ.»ի կողմէ բացուած անուանարկութեան դատին համար, որ այդ օրը ետ վերցուած էր» (“The Newly Discovered English Language Journals or Work Books of Reuben Darbinian,” *The Armenian Review*, Summer 1981, էջ 156): Մահտեսեանի անունը յիշուած է դատին վերջաւորութիւնը տեղեկացնող լուրին մէջ (*Հայրենիք*, 16 Դեկտեմբեր 1928. անգլերէն թարգմանութիւնը՝ “The Newly Discovered English Language Journals,” էջ 170):

<sup>26</sup> Փափաք (թրքերէն):

<sup>27</sup> Կ’ակնարկէ 1920ականներու վերջերուն «Հայրենիք»ի կողմէ հաստատուած գրական մրցանակին:

<sup>28</sup> Տե՛ս՝ Համաստեղի 30 Դեկտեմբեր 1928ի նամակը, ուր կը յայտնէր Աւետիս Ահարոնեանի դժգոհութիւնը «Հայրենիք»ի տուած գրական մրցանակներուն համար, զորս «նպաստ» կը նկատէր («Համաստեղի Նամակները», էջ 15. նաեւ՝ Համաստեղ, *Նամականի*, էջ 129):

<sup>29</sup> Կարօ Սասունի (1889-1977)՝ քաղաքական գործիչ, արձակագիր ու պատմաբան:

<sup>30</sup> Նատիա Արէշեան-Վարդանեան՝ Ռուբէն Դարբինեանի կինը:

<sup>31</sup> Կոստան Զարեան (1885-1969)՝ արձակագիր ու բանաստեղծ: Նամակը մեքենագիր է: Համաստեղին ուղղուած ու ԳԱԹի մէջ գտնուող Զարեանի նամակները հրատարակած էինք երկու հանգրուանով (Վարդան Մատթէոսեան, «Կոստան Զարեանի Նամակները Համաստեղին», *Բանբեր Երեւանի Համալսարանի*, 2, 1996, էջ 149-155. անդ, «Կոստան Զարեանի Նորայայտ Նամակները Համաստեղին», *Բագին*, 3, 2001, էջ 105-108):

<sup>32</sup> Կ’ակնարկէ ստալինեան բռնաճնշումներուն:

<sup>33</sup> Կ’ակնարկէ *Հայրենիք Ամսագիր*ին:

<sup>34</sup> Այդ թուականներուն, ամսագրին բովանդակութիւնը ամսէ-ամիս կը գրախօսուէր *Հայրենիք Օրաթերթ*ին մէջ:

<sup>35</sup> Խօսքը Ռ. Դարբինեանի մասին է:

<sup>36</sup> Պատուագին (ռուսերէն):

<sup>37</sup> Տրդատ Գազանճեան (1895-1966), կուսակցական գործիչ: Գազանճեանի հինգ նամակներէն կը հրատարակենք երեքը:

<sup>38</sup> *Հայրենիք Ամսագրի* առաջին թիւը լոյս տեսած էր Նոյեմբեր 1922ին:

<sup>39</sup> Ալէք Փիլիպոս (1888-1966)՝ կուսակցական գործիչ, ձեռնարկատեր, որուն անունը կը կրէ Լուս Անճելլոսի «Ալէք եւ Ռոզ Փիլիպոս» վարժարանը:

<sup>40</sup> Հերրի (Յարութիւն) Քարեան (1892-1967)՝ կուսակցական գործիչ, ձեռնարկատեր: Փիլիպոս ու Քարեան համագիւղացի էին (Խարբերդի Քէսրիկ գիւղէն):

- <sup>41</sup> Մերուժան Օզանեան (1885-1965)՝ կուսակցական գործիչ, *Հայրենիքի* խմբագիր (1916-1918), անելի ուշ՝ խմբագրութեան անդամ:
- <sup>42</sup> Համաստեղ 1930ականներուն *Հայրենիք Ամսագրին* մէջ հրատարակած էր կիսատ մնացած *Սպիտակ Ձիաորը* վէպը: Ան վէպը ամբողջացուցած ու երկու հատորով առանձին հրատարակած է երկու տասնամեակ ետք (Համաստեղ, *Սպիտակ Ձիաորը*, Ֆրեզնօ, 1952):
- <sup>43</sup> Հայ Կարմիր Խաչ՝ Հայ Օգնութեան Միութեան (հիմնուած՝ 1910ին) սկզբնական անունը:
- <sup>44</sup> Ուիլիըմ Սարոյեան (1908-1981)՝ անգլիագիր գրագէտ:
- <sup>45</sup> Լեւոն Սիրմէլեան (1906-1995)՝ անգլիագիր գրագէտ:
- <sup>46</sup> Համաստեղի եւ Սարոյեանի գրական փառքին մէկ մասը կապուած է *Հայրենիք Ամսագրին* եւ *Hairenik* անգլիատառ շաբաթաթերթին հետ: Սակայն, Սիրմէլեան կապ ունեցած չէ *Հայրենիքի* հետ:
- <sup>47</sup> Գասպար Իփէկեան (1884-1952)՝ բեմադրիչ, թարգմանիչ, կուսակցական գործիչ: 1935ին Միացեալ Նահանգներ այցելած էր որպէս գործիչ, վերաքննել տալով Ղեւոնդ Արք. Դուրեանը սպաննողներուն դատը:
- <sup>48</sup> Հուրի Իփէկեան (1919-1980)՝ բանաստեղծուհի, հանրային գործիչ:
- <sup>49</sup> Հաստատագիր (անգլ.):
- <sup>50</sup> Սազօ Յակոբեան (1895-1965)՝ Սան Փալոյի (Պրազիլ) «Դուրեան» Վարժարանի տնօրէն 1935-1941ին, Միացեալ Նահանգներ փոխադրուած էր իբրեւ Ֆրեզնոյի հայկական դպրոցի ուսուցիչ եւ եկեղեցոյ դպրապետ:
- <sup>51</sup> Սրբուհի Պէկեան (1903-1966)՝ Համաստեղի կինը:
- <sup>52</sup> Գազանճեան 1919-1920ին գործած էր Հայաստանի մէջ: Խորհրդային շրջանին, քանիցս ձերբակալուած, բանտարկուած ու աքսորուած էր Սիպերիա: 1934ին յաջողած էր մեկնիլ Խորհրդային Միութենէն ու հաստատուիլ Մ. Նահանգներ: Տարի մը ետք, հրատարակած էր հատոր մը իր փորձառութեան մասին (Էջմիածնեցի, *Տասնհինգ Տարի Բուշեիկեան Երկիրներու Մէջ*, Պոստոն, Տպ. «Հայրենիք», 1935):
- <sup>53</sup> Իոսիֆ Ստալին (1879-1953)՝ վրացի բուլշեւիկ գործիչ, Խորհրդային Միութեան միանձնեայ բռնատէր 1928-1953ին:
- <sup>54</sup> Էջմիածնեցի, «Ռուբէնը Պատմութեան Դատաստանի Առջեւ», *Հայրենիք Ամսագիր*, Մայիս եւ Յունիս 1957: Յօդուածը կը քննադատէր Սիմոն Վրացեանի տեսակէտերը Ռուբէն Տէր Մինասեանի մասին:
- <sup>55</sup> Լորիկ Համաստեղ (1939)՝ գրագէտին աագ դուստրը:
- <sup>56</sup> Արմինէ Համաստեղ (1942)՝ գրագէտին կրտսեր դուստրը:
- <sup>57</sup> Գազանճեանի ընտանիքին ինքնութիւնը կարելի չեղաւ պարզել:
- <sup>58</sup> Բանաստեղծ Աւետիք Իսահակեանը (1875-1957) եղած է ՀՅԴաշնակցութեան անդամ:
- <sup>59</sup> Գազանճեան անդրադարձած է Իսահակեանի հետ ծանօթութեան (Էջմիածնեցի, «Աւետիք Իսահակեան Մտերմութեան Մէջ», *Հայրենիք Ամսագիր*, Նոյեմբեր 1958):
- <sup>60</sup> Արտաշէս Չիլինգարեան՝ Ռուբէն Դարբինեանի բուն անունը:
- <sup>61</sup> Շնորհակալութիւն կը յայտնենք պատմաբան Անահիտ Տէր Մինասեանին՝ Ռ. Տէր Մինասեանի վերաբերեալ ընտանեկան տուեալներ հայթայթելու համար:

- <sup>62</sup> Հաւանաբար ակնարկած է աւագ քրոջ՝ Հռիփսիմէին (Հոլոս), որուն դուստրը ամուսնացած էր Ծատուր Բաղդասարեանի հետ:
- <sup>63</sup> Կ'ակնարկէ Տ. Գազանճեանին:
- <sup>64</sup> ՀՅԴաշնակցութիւնը հիմնուած է Թիֆլիսի մէջ, 1890ին, բայց իր կեդրոնական մարմինը շուտով հաստատած էր Ժընեւ:
- <sup>65</sup> Նկատի ունի Հայաստանի առաջին Հանրապետութեան վերջին վեց ամիսները՝ բոլշեւիկներու մայիսեան ապստամբութենէն մինչեւ խորհրդայնացում: Ռուբէն Տէր Մինասեան ռազմական եւ ներքին գործերու նախարարի պաշտօնը վարած է Մայիս-Նոյեմբեր 1920ին:
- <sup>66</sup> Կ'ակնարկէ 1940ականներու Դաշնակցութեան տարբեր մարմիններու կողմէ վարած քաղաքական գիծին, երբ, օրինակ, Միջին Արեւելքի մէջ կուսակցութիւնը կը նշէր Հայաստանի խորհրդայնացման տարեդարձը, եւ Երուսալայի մէջ որոշ անդամներ Գերմանիոյ հետ կարճաժամ գործակցութիւն կը հաստատէին:
- <sup>67</sup> Անասուն (թրքերէն):
- <sup>68</sup> Րաֆֆի (Յակոբ Մելիք-Յակոբեան, 1835-1888)՝ արեւելահայ վիպասան:
- <sup>69</sup> Նամակը մեքենագիր է:
- <sup>70</sup> Կ'ակնարկէ Հայ Յեղափոխականի Մը Յիշարակներըի հրատարակութեան՝ առանձին հատորներով (Լոս Անճելոս, 1951-1952):
- <sup>71</sup> Համաստեղին ուղղուած 26 Յունուար 1950 թուակիր նամակին մէջ, Տրդատ Գազանճեան գրած էր. «Պիտի խնդրէի քեզ, որ երեսի վրայ չի թողնէիր «Սպիտակ ձիաորդ», որքան կարելի է շուր պատրաստէ: Արդեն վերջնականօրէն որոշեցինք Ռուբենի [sic] գրքերը տպել Լոս Անճելոս, առաջի հատորը դրկած է, բայց դեռ չեմ ստացած, եթէ ժամանակին եւ կանոնաւոր դրկէ ձեռագր[ի]րները, 10 հատորները տպուած կը լինի առ առաւելն 15 ամիսէն: Բայց շար կը սխալուիս, եթէ կը կարծես թէ քո գիրքը պիտի տպենք Ռուբենի գրքերէն վերջ, ես որոշած եմ եւ տղաքը ինձ հետ համաձայն են, երկու հատոր Ռուբենի յուշերը տպելէ վերջ, երրորդը քոնը կը լինի, որմէ վերջ նորեն կը շարունակուի Ռուբենինը, այսպէս լինելով, եթէ նոր դժուարութիւն մը հրապարակ չելլէ, քո գիրքը Մայիս-Յունիսին տպագրութեան կը դրուի, որով աշխարհի որ ամեն ինչ պատրաստ լինի այդ ժամանակին» (Համաստեղ, Թղթածրար):
- <sup>72</sup> Ակնարկութիւնը թերեւս Ասատուր Խտրեանին է:
- <sup>73</sup> Կ'ակնարկէ կուսակցական ներքին պայքարներու Ամերիկայի մէջ: Տե՛ս՝ Համաստեղի 18 Սեպտեմբեր 1951ի նամակը Յակոբ Խաչմանեանին (Համաստեղ, Նամականի, էջ 139):
- <sup>74</sup> Լեւոն Գեւորեան (1880-1965), Փարիզի Յառաջ օրաթերթի երկարամեայ վարչական պատասխանատու եւ աշխատակից, պատմաբաններ Անահիտ Տէր Մինասեանի եւ Գեղամ Գեւորեանի հայրը:
- <sup>75</sup> Շաարշ Միսաքեան (1884-1957)՝ Յառաջի հիմնադիրն ու երկարամեայ խմբագիրը (1925-1957):
- <sup>76</sup> Լեւոն եւ Անահիտ Տէր Մինասեանի անդրանիկ զաւակը՝ Արեգ (Ռուբէն) Տէր Մինասեան, ծնած է 11 Մայիս 1951ին:
- <sup>77</sup> Վահիկ Տէր Մինասեան (1921/1922-1990) ասպարէզով ճարտարագէտ եղած է ու հեղինակած՝ իր յուշերուն ֆրանսերէն համառոտ թարգմանութիւնը, իսկ Լեւոն

---

Տէր Մինասեան (1926-2009) քիմիագետ ու կուսակցական գործիչ (ՀՅԴ Բիւրոյի անդամ) եղած է:

<sup>78</sup> Տե՛ս Համաստեղի՝ ըստ բովանդակութեան Փետրուար 1956 թուագրուած նամակը (Համաստեղ, *Նամականի*, էջ 335-336):

<sup>79</sup> Կ'ակնարկէ 20 Փետրուար 1956ին Ջարեհ Ա.ի ընտրութեան իբրեւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս:

<sup>80</sup> Շարք (անգլ. set):

<sup>81</sup> «Ուրեմն» բառը երկու անգամ գրուած է:

<sup>82</sup> Հայ Օգնութեան Միութիւն, բարեսիրական կանացի կազմակերպութիւն, հիմնուած՝ 1910ին, Է. Ալնունիի կողմէ: Տե՛ս ծնթ. 43:

<sup>83</sup> Լորիկ Համաստեղ 1956-1957ին հայերէնի դասերու հետեւած է «Նշան Փալանճեան» Ճեմարանին մէջ:

<sup>84</sup> Տե՛ս՝ Համաստեղ, «Աղօթարան», *Հայրենիք Ամսագիր*, Փետրուար 1956, էջ 13-18: «Աղօթարան»ը լոյս տեսած է շարունակաբար ամսագրի Յունուար, Փետրուար, Մարտ եւ Մայիս 1956ի թիւերուն մէջ, ապա՝ առանձին գիրքով (Պէյրութ, 1957):

<sup>85</sup> Յօդուածը՝ ձեռագիրէն արտատպուած, տե՛ս՝ Համաստեղ, *Մոռացուած էջեր, Հտր. Դ.*, կազմ. եւ ծանօթ.՝ Մարգարիտ Խաչատրեան, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 2007, էջ 131-139): *Ասպարէզը* բացառիկ թիւ մը նուիրած էր Ռ. Դարբինեանին (Խ.Ն., «Հայ Սփիւռք (Ամսական Տեսութիւն)», *Հայրենիք Ամսագիր*, Փետրուար 1956, էջ 110), որ բնականաբար լոյս տեսած էր յոբելեանէն առաջ եւ ո՛չ թէ 7 Փետրուարին, երբ *Ասպարէզի* թիւը նուիրուած էր յոբելեանական ձեռնարկի լրատուութեան (Համաստեղ, *Մոռացուած էջեր*, էջ 313) եւ Դարբինեան Համաստեղին գրած է Լոս Անճելըսէն. «*Ես շատ շնորհակալ եմ "Ասպարէզ"ի մէջ տպուած յօդուածիդ համար, ինչպէս շնորհակալ եմ միւս յօդուածագիրներուն»* (անդ):

<sup>86</sup> Ռ. Դարբինեան Մոսկուայի Համալսարանը մտած է 1903ին: 1904-1905ին, խուսափելով ցարական ոստիկանութեան հետապնդումներէ, անցած է Գերմանիա, յաճախելով Հայտըլպերկի եւ Մինիխի համալսարանները, իսկ 1905ին կարճ ժամանակով վերադարձած է Մոսկուայի Համալսարանը, թէեւ նոյն տարին, վերստին խուսափելով ոստիկանութենէն, անցած է Եկատերինոտար, 1905-1906ին զբաղելով կուսակցական-հանրային գործունէութեամբ (Tashjian, "Two Newly Discovered," էջ 250):

<sup>87</sup> Նատիա Դարբինեան Հայաստանի առաջին Հանրապետութեան երրորդ վարչապետ Համօ Օհանջանեանի կնոջ՝ Ռուբինա Արէշեան-Օհանջանեանի քոյրն էր: Ամուսնացած էր Վարդանեան անունով ճարտարապետի մը հետ, որմէ ունեցած էր որդի մը՝ Լեւոն Վարդանեան (1903-1931):

<sup>88</sup> Ռ. Դարբինեանի հանրային գործունէութեան 50ամեայ յոբելեանը նշուած է Լոս Անճելըսի (29 Յունուար 1956ին) եւ Ֆրեզնոյի մէջ (17 Փետրուար 1956):

<sup>89</sup> Հակազդեցութիւն (ֆրանսերէն):

<sup>90</sup> Տե՛ս՝ Համաստեղի 30 Մարտ 1956 թուակիր պատասխանին յետգրութեանը (Համաստեղ, *Նամականի*, էջ 337):

<sup>91</sup> Գրիգոր Շահինեան (1930-2009), գրադատ ու մանկավարժ:

<sup>92</sup> Գրիգոր Շահինեան, *Հայրընտիր*, Պէյրութ, Տպ. «Մշակ», 1962:

- 
- <sup>93</sup> Գրիգոր Շահինեան, *Համաստեղ*, Պէյրուֆ, Տպ. «Մշակ», 1961:
- <sup>94</sup> Տե՛ս՝ Համաստեղի 15 Հոկտեմբեր 1961ի նամակը Գր. Շահինեանին (Համաստեղ, *Նամականի*, էջ 283):
- <sup>95</sup> *Հայրենիք* (1899), ամերիկահայ օրաթերթ (այժմ՝ շաբաթաթերթ), ՀՅԴաշնակցութեան Արեւելեան ԱՄՆի պաշտօնաթերթ:
- <sup>96</sup> Էդուարդ Թոփչեան (1910-1975)՝ խորհրդահայ գրականագէտ: Հայաստանի Գրողներու Միութեան գլխաւոր քարտուղարը եղած է 1954-1975ին: Պէյրուֆ այցելած է Փետրուար-Մարտ 1962ին:
- <sup>97</sup> Կ'ակնարկէ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա.ին (1908-1994), որ գահակալած է 1955-1994ին: Վազգէն Ա. կաթողիկոս տարբեր առիթներով Հայաստան այցելելու հրաւերներ ուղղած է Համաստեղին:
- <sup>98</sup> Արմինէ Համաստեղը 1961-1962 կրթաշրջանին «Նշան Փալանճեան» Ճեմարանին մէջ հայերէնի դասերու հետեւած է:
- <sup>99</sup> 7 Դեկտեմբեր 1961ին, Համաստեղ գրած էր Շահինեանին. «*Արմինէն վերջիվերջոյ չի կրցաւ հաշտուիլ Ճեմարանի ներքին կանոններուն եւ որոշած է Ճեմարանէն դուրս՝ տեղ մը բնակիլ եւ շարունակել իր Ճեմարանի աշխատանքները՝ առանց կաշկանդուած զգալու: Գուցէ ծանօթ էք իր գանձապահներուն*» (Համաստեղ, *Նամականի*, էջ 283):
- <sup>100</sup> Բաբգէն Փափագեան (1915-1990), կուսակցական գործիչ, գրագէտ ու հրապարակագիր: Նամակը մեքենագիր է:
- <sup>101</sup> Յակոբ Խաշմանեան (1888-1968), հրապարակագիր, կուսակցական գործիչ: Հայաստան այցելած է Հոկտեմբեր 1964ին:
- <sup>102</sup> Յամառութիւն (թրքերէն):
- <sup>103</sup> Արամ Հայկազ (Չէքէմեան, 1900-1986)՝ ամերիկահայ արձակագիր:
- <sup>104</sup> Լեւոն Գարմէն (Ստեփանեան, 1915-1966)՝ բանաստեղծ ու խմբագիր:
- <sup>105</sup> Վարչակարգ (ֆրանսերէն):
- <sup>106</sup> Սրբուհի Մխիթարեան՝ *Հայրենիքի* նախկին խմբագիր, գրադատ Գուրգէն Մխիթարեանի (1890-1962) կինը:

---

NEWLY-DISCOVERED LETTERS ADDRESSED TO HAMASDEGH  
(Summary)

VARTAN MATIOSSIAN  
varny1@yahoo.com

The files of Armenian-American writer Hamasdegh (Hampartzum Gelenian, 1895-1966) were organized by fellow writer and close friend Aram Haigaz (Chekemian, 1900-1986) in 1971, and later delivered to the Museum of Literature and Art, “Yeghishe Charents” of Yerevan, during Soviet times. However, some items, mostly letters, were not included in the delivery due to their sensitive nature at the time. Hamasdegh was a member of the Armenian Revolutionary Federation, as well as some of his correspondents, and the undelivered letters, in Haigaz’s view, were of a highly subjective nature as they depicted the party or some of its members in an unfair way. In the end, the cache of letters - some of them apparently lost in the process - reached the archives of the Eastern Prelacy of the Armenian Apostolic Church (New York). Our examination of these documents allowed us select ten letters that, in spite of some controversial or inflammatory characterizations, were suitable for publication given their value as a source of information. The present publication includes annotated letters written to Hamasdegh by Rouben Darbinian (1888-1968), political activist and editor in chief of *Hairenik* Publications; Gostan Zarian (1885-1969), writer; Dertad Kazanjian (1895-1966), political activist; Rouben Ter Minassian (1882-1951), political activist and former Interior Minister of the first Republic of Armenia; Simon Vratzian (1883-1969), political activist and former Prime Minister of the Republic of Armenia; Krikor Chahinian (1930-2009), literary critic; and Papken Papazian (1915-1990), political activist.